

## **ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՋ**

### **Գազիկ Տեր-Հարությունյան**

Այսօրվա գլոբալ ճգնաժամն, առաջին հերթին, առնչվում է արժեքային խնդիրներին, երբ վիրտուալ, սպեկուլյատիվ հասկացությունները միտում ունեն վերածվելու «իրական» արժեքների: Այս առումով, հիմնարար գիտելիքն՝ իբրև ճշմարիտ արժեք, լրջագույն ռեսուրս է (ի դեպ, որոշ փորձագետներ առաջարկում են ապագայում դոլարի կամ եվրոյի փոխարեն ընդունել ԻՆՖՕ կամ ԻՆՏԵԼ անվանումը կրող ունիվերսալ տարադրամը): Ներկայիս գործընթացների մեկ այլ առանձնահատկությունն է պետական գործոնի աճը բոլոր ոլորտներում, ինչը հիմնավորում է նաև գիտության նկատմամբ պետական-ինստիտուցիոնալ մոտեցումների կիրառումը:

Հայտնի է, որ խորհրդային գիտական համակարգում Հայաստանի առաջավոր դիրքը բացառապես պայմանավորված էր գիտելիքի նկատմամբ ունեցած մեր ավանդական մոտեցումներով եւ ազգային յուրահատկությամբ: Այսօր էլ մեր գիտնականները հեղինակավոր գիտական պարբերականներում ավելի շատ են տպագրվում, քան Վրաստանի կամ Ադրբեջանի նրանց գործընկերները, չնայած այդ երկրներում գիտությանը տրվող միջոցներն անհամեմատ մեծ են:

Հատկանշական է նաև, որ արեւմտյան շատ փորձագետներ Պարաբաղյան պատերազմում հայկական կողմի հաղթանակը պայմանավորում են մեր տեխնոլոգիական զերակայությամբ (նշենք, որ «տեխնոլոգիա» եզրն արտահայտում է գիտելիքային ռեսուրսների ընդհանրությունը), քանի որ նյութական ռեսուրսների առումով հակառակորդը զգալի առավելություն ուներ, եւ այս դրույթի հետ դժվար է չհամաձայնել:

**Ազգային գիտություն.** Մեր հանրապետությունում այս տարիներին, վատ կամ լավ, կատարվել են բարեփոխումներ գրեթե բոլոր ոլորտներում, բացի գիտականից: Կարծես այդ բնագավառը դուրս է մնացել պետական համակարգից, դարձել մի տեսակ ինքնավար, եւ պետություն – գիտություն երկխոսությունն ընդունել է մոնոտոն բնույթ. գիտության ներկայացուցիչները միջոցներ են հայցում պետությունից, իսկ վերջինիս ներկայացուցիչները հիմնավորումներ են պահանջում: Սա վկայում է գիտության նկատմամբ որեւէ ռազմավարության բացակայության մասին, եւ այս

առունով արժե հիշել ստրատեգիայի այն պոստուլատը, թե սեփական ռազմավարություն չունենալ՝ կնշանակի ուրիշի ռազմավարության օբյեկտ հանդիսանալ:

Մինչդեռ, գիտակրթական ոլորտը ազգային անվտանգության տեղեկատվական հատվածի կարեւորագույն մասն է: Այդ առիթով, թերեւս, կարիք կա մեկնաբանելու «ազգային գիտություն» հասկացությունը, որը հաճախ պարզունակ է ընկալվում. օրինակ, որ գիտությունն ունիվերսալ հասկացություն է եւ չի կարող ազգային լինել: Մինչդեռ, «ազգային գիտություն» հասկացությունը, ըստ մեզ, հստակ բնութագրում ունի. դա այն գիտությունն է, որը ծառայում է ազգային շահերին: Այդ առունով ազգային կարող են լինել ոչ միայն անմիջականորեն Հայաստանի կամ Հայության հետ առնչվող գիտության ոլորտները, այլեւ, օրինակ՝ աստղաֆիզիկան, որտեղ առկա են առաջատար գիտական դպրոց եւ զգալի հաջողություններ: Նման առաջատարությունը բարձրացնում է պետության վարկանիշը, եւ դա զուտ բարոյական գործոն չէ. այդ իրողությունները հաշվառվում են ամենազանազան կառույցներում եւ վարկանիշային ցուցակներում, ինչն իր հերթին բարձրացնում է միջազգային վստահությունը տվյալ երկրի նկատմամբ:

Այս համատեքստում պետք է դիտարկել նաեւ այն, որ երբեմն գիտությանը մոտենում են զուտ տնտեսական չափանիշներով: Սա հակարդյունավետ է ոչ միայն նրանով, որ նման հաշվարկներ կատարելը անշնորհակալ գործ է. պետք է նաեւ գիտենալ, որ գիտակրթական համակարգն է ապահովում անհրաժեշտ որակի ազգային ընտրանու վերարտադրումը եւ, հետեւաբար, մրցունակ պետության եւ հանրության ձեւավորումը, ինչն էլ ազգային անվտանգության հիմնական գրավականն է:

Նկատենք, որ մեր հանրությունում տիրում է այն մտայնությունը, թե կարելի է ունենալ լավ կրթական համակարգ՝ առանց գիտական հենքի: Սա նույնպէս մոլորություն է, քանզի հայտնի է, որ գիտական համակարգի մակարդակն է, որ ձեւավորում է կրթական ողջ հիերարխիան՝ սկսած նախադպրոցական կրթությունից մինչեւ ասպիրանտուրա:

**Գիտության կազմակերպման մեթոդները.** Նկատենք, որ խորհրդային գիտական համակարգի փլուզման խնդիրներին նվիրված են տասնյակ վերլուծություններ, սակայն այդ համակարգի հայկական սեգմենտի կազմալուծման վերլուծությունը դուրս է մնացել մեր տեսադաշտից: Որպէս հետեւանք՝ մեր գիտության կազմակերպիչները երբեմն մոռանում են, որ կայսերական գիտական համակարգն այլեւս գոյություն չունի եւ սուղ միջոցները ծախսվում են ոչ հրատապ խնդիրների ուսումնասիրման

վրա: Ըստ այդմ, պետք է ձեւավորել մեր պետական շահերից բխող կոմպակտ եւ մրցունակ գիտական համակարգ: Միեւնույն ժամանակ, կարելու է ամրագրել, որ մենք այդ գործընթացը նոր էջից չենք սկսում, քանի որ ստացել ենք նույն խորհրդային գիտական համակարգից ժառանգություն, որի հետ, ի դեպ, անխնա ենք վարվել, եւ որից, սակայն, դեռ բավական ռեսուրսներ պահպանվել են:

Այդ տեսանկյունից՝ համառոտ անդրադարձ կատարենք գիտության կազմակերպման հիմնական մեթոդներին.

1. Միջնադարից եկող եվրոպական «հետազոտական համալսարանների» ավանդույթը, երբ հովանավորվում էին առանձին օժտված գիտնականներ, որոնք զբաղվում էին իրենց հետաքրքրող խնդիրներով. սա փայլուն արդյունքներ տվեց հատկապես Գերմանիայում, սակայն գրեթե կազմալուծվեց նացիստական ռեժիմի փլուզումից հետո: Սակայն ներկայումս այդ համակարգը վերականգնվելու միտումներ է ցուցաբերում:

2. Ինստիտուցիոնալ-պետական ֆինանսավորում, որը հատուկ էր խորհրդային ակադեմիական համակարգին. այն արդյունավետ էր մինչեւ 80-ականները, սակայն դեգրադացվեց ընդհանուր համակարգին զուգահեռ:

3. Դրամաշնորհային համակարգ, որը, համաձայն փորձագիտական գնահատականների, հատկապես արդյունավետ է, երբ կատարված հետազոտություններն անհրաժեշտ է հասցնել տրամաբանական ավարտի:

4. Ներկայումս լայն տարածում են գտել ինովացիոն կառույցները, օրինակ՝ Ռուսաստանում 30 հազար ինովացիոն ընկերություն կա, սակայն, համաձայն նույն փորձագիտական դիտարկումների, դրանք արդյունավետ չեն գործում առանց ինստիտուցիոնալ կազմակերպման ձեւերի: Ինովացիոն գործունեությունն առանձնահատուկ մտածելակերպ ունեցող հետազոտողների ոլորտն է, եւ ակադեմիական ինստիտուտներից ինովացիոն առաջարկներ պահանջելը գիտության կազմակերպման տեսանկյունից նվազագույնը անարդյունավետ է:

Այսօր ձեւավորվել է տեսակետ, որ մեթոդաբանորեն սխալ է շեշտադրումը կատարել գիտության կազմակերպման որեւէ մեկ ձեւի վրա: Դա լավ են ըմբռնել, օրինակ, ամերիկացիները, որոնք լայնորեն կիրառում են կազմակերպչական բոլոր ձեւերը եւ դրանց մոդիֆիկացիաները: Հատկանշական է, որ նման մոտեցումն է այժմ գերակայում նաեւ Ռուսաստանում: Այսինքն՝ կարելի է փաստել, որ գիտության կազմակերպման ոլորտում հաստատվում են համալիր եւ սինթետիկ մոտեցումներ, եւ դա ընդունելի պետք է լինի նաեւ հայ ազգային գիտության կազմակերպման համար:

**Որոշ հետևություններ.** Որպես առաջին քայլ՝ պետք է փորձել ազատվել նախկին խորհրդային գիտական համակարգի սինդրոմներից եւ ձեւավորել նոր, մեր ազգային շահերին ծառայող գիտական համակարգ, որտեղ պետք է կիրառվեն ե՛ւ ինստիտուցիոնալ, ե՛ւ ազատական-կոմերցիոն մեթոդները: (Այդ համատեքստում նկատենք, որ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի կազմալուծման մասին առաջարկները նեղ կորպորատիվ շահեր են հետապնդում եւ չեն բխում ազգային անվտանգության առաջնահերթություններից):

Միաժամանակ, պետք է առողջացնել գիտական ենթակառուցվածքը, որակապես մեծացնել ոլորտի ֆինանսավորումը, բարձրացնել գիտնականի կարգավիճակը: Խիստ կարեւոր է՝ այս փուլում ունենալ ոչ ստանդարտ, ինովացիոն մոտեցումներ եւ ամենակարեւորը՝ չակնկալել շուտափույթ որեւէ դիվիդենտ, հակառակ պարագայում՝ կորուստները շատ ավելի մեծ են լինելու:

**ԼՂՀ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՁ.  
«ԱՂՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ»  
Սարգիս Հարությունյան**

Արեւմուտքի որոշումը՝ ավելի քան \$4.5 մլրդ հատկացնել Թբիլիսիին, անշուշտ, չի նշանակում, թե Սահակաշվիլու վարչակազմը երաշխիքներ ստացավ, որ գալիք ծնռանից հետո իրեն կհաջողվի մնալ իշխանության գլուխ: Բայց դա նշանակում է, որ Արեւմուտքում ցանկանում են երաշխիքներ ունենալ, որ վրացական ներքաղաքական զարգացումների ցանկացած տարբերակի դեպքում այդ երկրի արտաքին ռազմավարությունը չի կրի էական փոփոխություններ: Մյուս կողմից, Աբխազիայի ու Հարավային Օսիայի ճանաչումից հետո ավելի հիմնավորված է թվում այն տարբերակը, որ առնվազն կարծատել հեռանկարում Մոսկվան սպառել է Թբիլիսիի վրա ներագդելու իր գլխավոր լծակը<sup>1</sup>:

Այս պայմաններում միակ այլընտրանքը Մոսկվայի համար հանդիսանում է Ադրբեջանի նկատմամբ այնպիսի վերահսկողության սահմանումը, որն ի վիճակի կլինի խոչընդոտել արեւմտյան չղադարող աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական էքսպանսիան Հարավային Կովկաս – Կասպից – Կենտրոնական Ասիա գծով:

Եվ քանի դեռ Ռուսաստանի համար «փակ» է վրացական ուղղությունը, Ադրբեջանի գեոստրատեգիական արժեքը Կրեմլում բարձր է գնահատվելու: Հետեւաբար, Հարավային Կովկասում գործող միջազգային ուժի կենտրոնների հիմնական ջանքերը Վրաստանից կարող են տեղափոխվել Ադրբեջան:

Մեզ համար նախելառաջ կարելու է այն, որ առաջիկա ժամանակահատվածում նշված տրամաբանությունը գերիշխող է լինելու տարածաշրջանային քաղաքականության մեջ: Ուժի կենտրոնների համար մենք չենք կարող ո՛չ փոխարինել Ադրբեջանին եւ ո՛չ էլ կարող ենք անտեսել այդ հանգամանքը: Ներկայում հենց այդ համատեքստում էլ հանդես է գալիս ԼՂՀ հիմնախնդիրը:

**Իրավիճակային վերլուծություն**

«Ադրբեջանական հարցը» նորություն չէ: Այդ երկրի աշխարհագրական դիրքը եւ էներգետիկ պաշարները նախորդ դարում էական նշանակություն են ունեցել հարավկովկասյան աշխարհաքաղաքականության

համար, եւ իրադարձությունները ցույց են տալիս, որ իրավիճակը քիչ է փոխվել նաեւ մեր օրերում:

Տարօրինակ չէ, որ Ռուսաստանի նախագահ ընտրվելուց կարճ ժամանակ անց Դմիտրի Մեդվեդեւն այցելեց Բաքու: Այդ իմաստով զուգահեռներն այն փաստի հետ, որ բուլղերիկյան Ռուսաստանը Հարավային Կովկասի խորհրդայնացումը սկսեց հենց Ադրբեջանից, ավելի շատ օրինաչափություն են, քան պատահականություն: Հետեւաբար, մեզ համար անակնկալ չպետք է լիներ այն, որ 2008թ. աշնանը Մոսկվան ու Անկարան որոշեցին միասին հանդես գալ տարածաշրջանին առնչվող դիվանագիտական համալիր նախաձեռնությամբ: Երկու կողմերի այդ քայլը նույնպես պետք է գնահատել որպես աշխարհաքաղաքական օրինաչափ կոնստրուկցիա, ինչպես 20-րդ դարի սկզբին էր, եւ քանի դեռ չի փոխվել տարածաշրջանային քաղաքականության տրամաբանությունը, այդ օրինաչափությունն իրեն ժամանակ առ ժամանակ զգալ կտա:

Ներկայացված զարգացումների համատեքստում պետք է նոր իմաստով գնահատել հունիսի սկզբին «Газпром»-ի ղեկավար Ալեքսեյ Միլերի առաջարկությունը Ալիեւ-կրտսերին, ըստ որի՝ ռուսական ընկերությունը պատրաստ է գնել արտահանման նախատեսված ադրբեջանական ողջ բնական գազը՝ միջազգային բարձր գներով<sup>2</sup>: Անշուշտ, առաջարկությունն ինքնին ռազմավարական էր եւ առաջին հերթին նշանակում է, որ Ռուսաստանը հայտ է ներկայացրել Ադրբեջանի արտաքին քաղաքականության նկատմամբ սեփական ազդեցությունը մեծացնելու ուղղությամբ (բանաձեւը շատ պարզ է՝ ով վերահսկում է Բաքվի էներգետիկ հոսքերը, վերահսկում է նրա արտաքին քաղաքականությունը): Բայց գլխավոր հետեւությունն այն չէ, որ մենք պետք է նորություններ սպասեինք Ադրբեջանի նավթային սեկտորին առնչվող ռուսական նախաձեռնություններում<sup>3</sup>, այլ այն, որ Միլերի առաջարկությունից հետո կանխատեսելի էր Ղարաբաղյան հարցում ռուսական ակտիվության կտրուկ աճը: Այս դեպքում նույնպես բանաձեւը հստակ է՝ Ադրբեջանում ռազմավարական գերակայության հասնելու համար վերահսկողությունը նրա էներգետիկ պաշարների նկատմամբ բավարար չէ, պետք է վերահսկողություն հաստատվի նաեւ ԼՂՀ հիմնախնդրի նկատմամբ:

Բայց ի տարբերություն նախորդ դարասկզբի, մենք, այնուամենայնիվ, նորություններ ունենք: Պատահական չէ, որ ռուս-վրացական պատերազմից հետո Վաշինգտոնում որոշեցին փոխնախագահ Դիք Չեյնիի մակարդակով պատվիրակություն ուղարկել Ադրբեջան: Ճիշտ է,

ԱՄՆ փոխնախագահն այցելեց նաեւ Վրաստան եւ Ուկրաինա, սակայն ուշադրություն գրավեց այն հանգամանքը, որ նրա առաջին հանգրվանը Բաքուն էր (սեպտեմբերի 3): Իսկ մոտ մեկ ամիս անց՝ հոկտեմբերի 1-3-ը, Ադրբեջանի մայրաքաղաքում էր ԱՄՆ պետքարտուղարի առաջին տեղակալ Ջոն Նեգրոպոնտեն: Հիշեցնենք, որ 2005–2007թթ. ընթացքում Նեգրոպոնտեն զբաղեցրել է ԱՄՆ նորաստեղծ Ազգային հետախուզության տնօրենի պաշտոնը, ում անուղղակի ենթակայության ներքո են գործում ամերիկյան գրեթե բոլոր հատուկ ծառայությունները, եւ համարվում է ԱՄՆ ներկայիս վարչակազմի առանցքային դեմքերից մեկը:

Փաստն այն է, որ նշված այցերն ի ցույց են դնում ամերիկյան կողմի մտահոգությունները՝ կապված Բաքվի շուրջ ընթացող զարգացումների հետ: Օրինակ, օգոստոսին միջազգային շուկա Բաքուն իր նավթի մի որոշակի չափաբաժինը՝ 100 հազ. տոննա, արտահանեց Իրանի միջոցով, իսկ սեպտեմբերին այդ թիվը հասավ 300 հազ. տոննայի<sup>4</sup>: Բնութագրիչ է, որ ընդամենը մեկ տարի առաջ անհեռանկարային թվացող այդ տարբերակները (ադրբեջանական նավթի արտահանումը Ռուսաստանի եւ Իրանի միջոցով<sup>5</sup>) ուղեկցվեցին պաշտոնական Բաքվի ուշագրավ հայտարարություններով: Ա.թ. սեպտեմբերի 25-ին «The Financial Times» պարբերականի հրապարակած հարցազրույցում Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը հայտարարեց, թե Բաքվի արտաքին քաղաքական ռազմավարությունն է լինել բոլորի լավ բարեկամը՝ համաձայն սեփական ազգային շահերի:

Ներկայացվածը նշաններ էին, որ Բաքվում, ըստ ամենայնի, ձեռնամուխ են եղել փոփոխություններ մտցնել սեփական էներգակիրների արդյունահանման եւ արտահանման ռազմավարությունում: Հնարավոր է, որ դա այդպես չէ, սակայն Չեյնիի ու Նեգրոպոնտեի այցերը վկայում են, որ Վաշինգտոնում հենց այդպես էլ հասկացել էին: Քիչ հավանական է, որ այդ պահին գոյություն ունենար որեւիցե այլ հարց, որն ամերիկյան վարչակազմի նման բարձրաստիճան ներկայացուցիչներին կբերեր Բաքու:

Թեեւ ս.թ. նոյեմբերի 2-ի Մայեմդորֆի հռչակագիրը չի խոսում այս փուլում ռուսական դիվանագիտության հաջողության մասին, սակայն մի բան հստակ է՝ հռչակագիրը նաեւ չի փակում սկիզբ առած գործընթացը: Նշվածը մի կողմից՝ հիմք է տալիս ենթադրելու, որ մինչեւ ամերիկյան նոր վարչակազմի գործունեությունը դժվար թե Մոսկվան հանդես գա նոր՝ լուրջ նախաձեռնությամբ, բայց մյուս կողմից՝ ստեղծված դադարը սահմանափակվելու է առաջիկա երկու-երեք ամիսներով:

## **Գնահատական եւ հեռանկար**

Հենվելով այդ թվում Մայենդորֆի հռչակագրի վրա՝ ավելի իրատեսական է ներկայանում այն գնահատականը, որ ԼՂՀ շուրջ առկա status quo-ն փոխելու առումով Մոսկվայի հնարավորությունների պատուհանը փակվում է:

Սակայն փաստն այն է, որ ռուսական նախաձեռնությունն իր ազդեցությունն է ունեցել տարածաշրջանի բոլոր երկրների եւ տարածաշրջանում գործող ուժի կենտրոնների քաղաքականությունների վրա: Կարելոր է նաեւ գիտակցել, որ սկիզբ առած գործընթացը դեռ ավարտուն տեսք չի ստացել: Հավանական է, որ նոր իրավիճակի վերաբերյալ մենք ավելի հստակ պատկերացումներ ունենանք գալիք տարի:

Ներկայացվածը նշանակում է, որ ներկայում որոշ առումով փոխվում է ԼՂՀ հակամարտության շուրջ առկա աշխարհաքաղաքական կոնստրուկցիաների եւ ընդհանրապես փոխդասավորվածության պատկերը, որն ընդհանուր գծերով պահպանվում էր 1994-ից ի վեր:

Այս պահին գլխավոր հետեւությունն առնչվում է Ադրբեյջանին: Ավելի հավանական է ներկայանում այն տարբերակը, որ եթե Վաշինգտոնում, Լոնդոնում, Բյուրսելում կամ նույնիսկ Թեհրանում որոշեն ընդդիմանալ ռուսական նախաձեռնությանը, ապա դրա առաջին նշանները մենք կտեսնենք Բաքվում: ԱՄՆ–Մեծ Բրիտանիա զույգի համար Մոսկվայի կողմից «ճեղքման» գրանցումը կամ առավել եւս՝ վերահսկողության սահմանումը ԼՂՀ խնդրի նկատմամբ կնշանակի եթե ոչ Ադրբեյջանի հիմնական էներգետիկ հոսքերի նկատմամբ ազդեցության կորուստ, ապա գոնե Ադրբեյջանի էներգետիկ ոլորտում ներկայության կրճատում:

Հեռանկարի իմաստով կարելոր նշանակություն ունեն երկու հարց.

❖ Ի՞նչ որոշման են հանգելու Բաքվում 2009թ. հունվարից հետո, երբ հասկանալի կդառնա ամերիկյան նոր վարչակազմի քաղաքականությունը տարածաշրջանում<sup>6</sup>:

❖ Ի՞նչ զարգացում կապրեն հայ-թուրքական հարաբերությունները, եթե հաշվի առնենք, որ այդ թվում Մոսկվայի միջնորդությամբ վերջին շրջանում ակտիվացած Երեւան–Անկարա բանակցությունները հիմք են ստեղծել այդ ուղղությամբ «ճեղքում» գրանցելու նաեւ ԱՄՆ-ի համար<sup>7</sup>:



1 Այդ առումով առավել իրատեսական է ներկայանում, օրինակ, ռուս-վրացական հարաբերությունների նորմալացումը, քան հետագա սրացումը, ինչին ձգտում են Եվրամիությունը եւ Միացյալ Նահանգները, եւ որը կարող է որոշակի առումով ընդունելի լինել Մոսկվայի ու Թբիլիսիի համար՝ Սահակաշվիլու հեռանալուց հետո:

2 Ըստ արեւմտյան աղբյուրների, Ադրբեջանի միայն «Շահ-Ղեմիզ» գազահանքը պարունակում է 1.2 տրլն մ<sup>3</sup> բնական գազի պաշարներ, եւ 2011թ. հետո այն տարեկան կկարողանա արդյունահանել մոտ 17 մլրդ մ<sup>3</sup> բնական գազ: Ըստ հունիսին տարածված տեղեկության, Միլերը ադրբեջանական հազար մ<sup>3</sup> գազի դիմաց առաջարկել է \$360:

3 Հիշեցնենք, որ երբ վրաց-ռուսական պատերազմի հետեւանքով ժամանակավորապես փակվեցին Վրաստանի տարածքով անցնող «Բաքու–Թբիլիսի–Ջեյհան» ու «Բաքու–Սուփսա» նավթամուղներն ու անհնար դարձավ ադրբեջանական նավթը միջազգային շուկա տեղափոխել վրացական երկաթգծով, Բաքուն որոշում կայացրեց իր սեւ ոսկու մի մասը (օրական մոտ 100 հազ. բարել) տեղափոխել Ռուսաստանի միջոցով՝ «Բաքու–Նովոռոսիյսկ» նավթամուղով: Վրաց-ռուսական պատերազմից հետո էլ ռուսական ուղին շարունակում է գործել:

4 Իրանի միջոցով ադրբեջանական նավթն արտահանվում է այսպես կոչված փոխանակման (swap) միջոցով: Բաքուն իր արդյունահանած նավթը Իրանի կասպյան Նեկա նավահանգստում հանձնում է իրանական «National Iranian Oil Terminals Co.» ընկերությանը եւ նույն քանակությամբ նավթ ստանում Իրանի հարավային՝ Պարսից ծոցի նավահանգիստներում, որտեղից էլ արտահանում է միջազգային շուկա:

5 Նախկինում այդ տարբերակներն իրական չէին համարվում, քանի որ ադրբեջանական նավթը բավականացնում է միայն «Բաքու–Թբիլիսի–Ջեյհան» ու «Բաքու–Սուփսա» նավթամուղներով արտահանելու համար, եւ պատճառներից մեկն էլ դա էր, որ 2007թ. սկզբից Բաքուն հրաժարվեց իր նավթն արտահանել «Բաքու–Նովոռոսիյսկ» նավթամուղով:

6 Այս իմաստով, թերեւս, ամենեւին էլ պատահական չէին նոյեմբերի 10-13-ը Ադրբեջանի հյուսիսային՝ Դաղստանին սահմանակից Գուսարի եւ Ղուփայի շրջաններում տեղի ունեցած ռազմական գործողությունները՝ Ադրբեջանի զինված ուժերի եւ վահաբական մի խմբավորման միջեւ: Խմբավորմանը հաջողվել էր մի քանի օր դիմադրություն ցույց տալ ծանր զինտեխնիկայով զինված ադրբեջանական ներքին զորքերին:

7 Կախված այն հանգամանքից, թե այդ «ճեղքումը» որ միջնորդի տրամաբանությամբ կիրականանա, գործընթացը կարող է համապատասխան ազդեցություն թողնել ողջ տարածաշրջանի եւ, մասնավորապես, ԼՂՀ հիմնախնդրի վրա: Մի բան, սակայն, արդեն այսօր պարզ է՝ տեղի ունեցած զարգացումներից հետո թուրքական կողմին ավելի դժվար կլինի վարել հայ-թուրքական սահմանի փակ մնալուն միտված քաղաքականություն:

## **ԹՈՒՐՔԱԿԱՆ «ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ» ՆԱԽԱՅԻՄՔԵՐԸ**

### ***Ռուբեն Մելքոնյան***

Սույն թվականի նոյեմբերի սկզբին Եվրամիության պաշտպանության նախարարների ժողովին մասնակցելու համար Բրյուսելում էր գտնվում Թուրքիայի պաշտպանության նախարար Վեջդի Գյոնուլը: Վերջինս նոյեմբերի 10-ին ելույթ ունենալով Բրյուսելի թուրքական դեսպանատանը կայացած Աթաթուրքի հիշատակին նվիրված միջոցառմանը՝ արտահայտել է շատ ուշագրավ եւ միեւնույն ժամանակ սկանդալային միտք՝ կապված թուրքական «ազգային պետության» հետ: Ըստ նրա, ներկայիս Թուրքիայի միատարր, «ազգային» լինելու համար նրանք պարտական են դարասկզբին տեղի ունեցած մի շարք հանգամանքների, այդ թվում՝ 1923թ. Թուրքիայի եւ Հունաստանի միջեւ բնակչության փոխանակմանը, համաձայն որի՝ Թուրքիայում բնակվող հույներն արտաքսվեցին Հունաստան, իսկ այնտեղի մուսուլման թուրքերը՝ Թուրքիա: Այդ փոխանակման ընթացքում, ըստ տարբեր աղբյուրների, Թուրքիայից տեղափոխվել է 1.5-2.5 միլիոն հույն, իսկ Հունաստանից՝ 350-500 հազար թուրք: Թուրքիայի պաշտպանության նախարարն, ի դեպ, ասել է. «Այսօր, եթե էգեյան ծովի ավազանում հույները եւ Թուրքիայի շատ վայրերում հայերը շարունակեին ապրել, արդյո՞ք մենք կարող էինք նույն ազգային պետությունը լինել: Չգիտեմ ինչ բառերով ձեզ բացատրեմ, թե հույների փոխանակումը որքան կարեւոր էր»:

Այս խոսքերի տակ իրականում թաքնված է թուրքական ժամանակակից պետության մի ամբողջ գաղափարախոսություն, որի արմատները հասնում են մինչեւ Օսմանյան կայսրություն: Այդ գաղափարախոսությունը ենթադրում է, որ թուրքերը հայերի, հույների կամ ոչ մուսուլմանների հետ չեն կարող մի պետության մեջ խաղաղ գոյակցել, իրենց խոսքերով՝ «ազգային պետություն» լինել: Պաշտպանության նախարարի, գուցե եւ անզգույշ, խոսքերում նաեւ թուրքական իշխող վերնախավի, կարելի է ասել, ավանդական մոտեցումն է թաքնված, այն է՝ հայերը, հույները, ոչ մուսուլմանները պետք է ոչնչացվեն, ձուլվեն կամ հեռանան այս երկրից: Միաժամանակ, էթնիկ խտրականության մասին այս անկեղծ խոստովանությունը ստիպում է եւս մեկ անգամ խորհել թուրքերի հետ խաղաղ գոյակցելու խնդրի շուրջ, քանի որ հենց իրենք՝ թուրք պաշտոնյաներն են, փաստորեն, անուղղակի եւ ուղղակի ապացուցում, որ այդ քարոզները

կամ կեղծ են, կամ էլ անարժեք իրենց համար:

Պաշտպանության նախարար Վեջդի Գյոնուլը նաև կարելու է թուրքիայի Հանրապետության ձեռավորման ժամանակվա սկզբունքները՝ «ազգակերտունը» եւ տնտեսությունը: Խոսելով հատկապես տնտեսության եւ դրանում այլազգիների դերի մասին՝ Գյոնուլն ասել է հետեւյալը. «Ես մի ժամանակ աշխատել եմ Իզմիրի Առեւտրի պալատում, եւ այս պալատի հիմնադիրների շարքում գեթ մեկ մուսուլման չկար, բոլորը լեւանտացիներ (եվրոպացիներ) էին: Հանրապետության հիմնադրումից առաջ էլ Անկարայում կար չորս թաղամաս, որոք պատկանում էին հայերին, հույներին, հրեաներին եւ մուսուլմաններին: Էգեյան ավազանում բարեբեր հողերը փոքրամասնությունների ձեռքում էին»: Քննադատելով «տխուր» անցյալը՝ թուրքիայի պաշտպանության նախարարը պետք է շատ ուրախանա ներկայիս վիճակով, քանի որ այն ներկայացնում է լիովին այլ պատկեր: Նախարար Գյոնուլը անուղղակիորեն դրական է համարել նաև թուրքիայի տնտեսությունից ոչ մուսուլմաններին հեռացնելը:

Պաշտպանության նախարար Գյոնուլի մտքերը լայն արձագանք գտան ինչպես թուրքիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Օրինակ՝ թուրք հայտնի քաղաքագետ, պրոֆեսոր Բասքն Օրանը 1923թ. բնակչության փոխանակումը որակում է որպես էթնիկ եւ կրոնական զտում, եւ գտնում, որ այս փոխանակումն ու «1915-ի հայերի արքայադատումը ոչնչացրին թուրքիայում բազմազանությունը»: Այս ամենը, ըստ պրոֆեսորի, մեծ վնաս հասցրեց թուրքիային, ընդ որում՝ տարբեր բնագավառներում: Օրանը սխալ է որակել նաև այս մտքերի արտահայտումը՝ հատկապես արտասահմանում. «Այս խոսքերն ասվել են արտասահմանում: Նախ մտածում եմ, թե օտարները սա լսելով ինչ են ասել: Ճիշտ է՝ թուրքիայի Հանրապետությունը հույների փոխանակումը արյունալի չի արել, ինչպես Օսմանյան կայսրությունը, սակայն որքանով է ճիշտ այս ամենն արտասահմանցիների առջեւ այսպես ասել: Այս խոսքերը եւ մշակութային, եւ քաղաքական, եւ տնտեսական առումներով սխալ են»:

Նախարարի խոսքերի առիթով թուրքիայի վարչապետին ուղղված բաց նամակով հանդես եկան մի խումբ պոլսահայեր, որոնց աջակցեցին մոտ 20 մտավորական-գիտնականներ: Ըստ նրանց, նախարարը պարծեցնում է հպարտանում է իրենց երկրում իրականացված էթնիկ խտրականությանը, որի հետեւանքով միլիոնավոր մարդիկ բռնությամբ հեռացվել են այն վայրերից, որտեղ նրանց նախնիներն ապրել են հազարամյակներ: Թուրք նախարարին արձագանքեց եւ պաշտոնական Աթենքը. Հունաստանի արտաքին գործերի նախարարության մամուլի խոսնակ Յորգոս

Կունուչակոսը դա որակեց հետեւյալ կերպ. «Նախարարի հայտարարության մեջ նկատվում է վտանգավոր եւ անընդունելի տրամաբանություն»: Թուրքական «Ջաման» թերթում Իսսան Դաղըն իրավացի հարց է տալիս՝ նախարար Գյոնուլը իշխող Արդարություն եւ զարգացում կուսակցության՞ անդամ է, թե՞ երիտթուրքական Միություն եւ առաջադիմություն կուսակցության, որովհետեւ նրա մոտեցումները կրում են զուտ իթթիհադական բնույթ: Եվ, ըստ նրա, էնվեր փաշայի աթոռի մերօրյա ժառանգի խոստովանությունը մեծ հաղթաթուղթ կարող է դառնալ «հայկական աքսորի» հարցում, բնականաբար, ոչ ի նպաստ Թուրքիայի: Շատերը մեղադրում են նախարարին, թե նա, ասելով այս խոսքերը, մեծ սխալ է գործել, որը կօգտագործեն Թուրքիայի թշնամիները, առաջին հերթին՝ հայկական սփյուռքը: Նախարարի խոսքերի առիթով դատական հայցով է հանդես եկել Թուրքիայի «Համերաշխություն մարդու իրավունքների եւ հալածվածների համար» կազմակերպությունը՝ գտնելով, որ նրա մտքերում հստակ արտահայտված են էթնիկ խտրականության տարրեր:

Գյոնուլի արտահայտությունների հետեւանքով բարձրացած եւ օրեցօր նոր ծավալներ ընդգրկող աղմուկից հետո պաշտպանության նախարարն անհաջող փորձ արեց սրբագրելու իր խոսքերը՝ ասելով, թե նկատի չի ունեցել մեր օրերը, այլ՝ 80 տարի առաջվա դեպքերը: Սակայն, չէ՞ որ ներկայիս պատկերը արդյունքն է հենց դարասկզբին տեղի ունեցած դեպքերի:

Ինչպես դիպուկ նկատել է թուրք գիտնական Ջենգիզ Աքթարը՝ «Գյոնուլին Աստված է ստիպել, որ խոսի» եւ նրա խոսքերը որակել որպես խոստովանություն: Եվ իրոք, սա կարելի է համարել պետական քաղաքականության մասին խոստովանական հայտարարություն, քանի որ հայտնի է, որ Օսմանյան կայսրության իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետությունը Հայոց ցեղասպանության, հույների, ասորիների կոտորածների արդյունքում ժառանգեց անհամեմատ ավելի փոքրաթիվ ազգային-կրոնական փոքրամասնությունների համայնքներ, սակայն նրանց հանդեպ պետական քաղաքականությունը եւ վերաբերմունքը մնաց նույնը՝ փոքրամասնությունները վտանգավոր են, թշնամի եւ օտար:

Վստահաբար կարող ենք պնդել, որ ազգային փոքրամասնությունները հանրապետական Թուրքիայում դրա հիմնադրման սկզբից եւեթ ենթարկվել են տարատեսակ հալածանքների եւ բռնաճնշումների, չնայած որ Լոզանի պայմանագրով տեսականորեն պաշտպանված էին նրանց իրավունքները: Ոչ մուսուլմանների հանդեպ Թուրքիայի Հանրապետությունում կիրառվել է բռնաճնշումների մի ամբողջ համալիր՝ աքսոր, ծուլում, կրոնական, քաղաքական, տնտեսական հալածանքներ՝ նպատակ հետա-

պնդելով ձեւավորել միատարր, «ազգային» Թուրքիա: Այս նպատակին են ծառայել Թուրքիայի Հանրապետությունում հալածանքի քաղաքականության մի շարք բաղկացուցիչներ, որոնցից են Ունեցվածքի հարկը<sup>1</sup>, 20 դասակարգ գորակոչը<sup>2</sup>, 1955թ. սեպտեմբերի 6-7-ի դեպքերը<sup>3</sup>, «Հայրենակից, թուրքերեն խոսիր»<sup>4</sup> ակցիաները եւ այլն:

1. Երկրորդ համաշխարհայինի թեժ տարիներին՝ 1942թ., թուրքական կառավարությունը, վարչապետ Շուքրու Սարաջօղլուի գլխավորությամբ, Ազգային մեծ ժողովի հաստատմանը ներկայացրեց, այսպես կոչված, «Ունեցվածքի հարկ»-ի մասին օրենքը, որն ընդունվեց 1942թ. նոյեմբերի 11-ին՝ խորհրդարանի նիստին մասնակցող 350 պատգամավորների միաձայն քվեարկությամբ: Անգեն աչքով անգամ նկատելի էր, որ օրենքը բացահայտորեն ուղղված է ազգային-կրոնական փոքրամասնությունների դեմ:

«Ունեցվածքի հարկ»-ը հարկատուներին բաժանում էր 4 խմբի՝ ըստ կրոնական պատկանելության. ա. մուսուլմաններ, բ. ոչ մուսուլմաններ, գ. հավատափոխներ, դ. օտարահպատակներ: Փաստորեն, սրանով խախտվում էր սահմանադրական այն դրույթը, որի համաձայն՝ բոլորը, այդ թվում եւ ոչ մուսուլմանները, Թուրքիայի իրավահավասար քաղաքացիներ էին, եւ սա պվելի շատ հիշեցնում էր օսմանյան տիրապետության շրջանը, երբ ոչ մուսուլմանները վճարում էին մուսուլմաններից տարբերվող հարկեր: Իսկ հավատափոխներին չընդգրկելով մուսուլմանների խմբի մեջ՝ թուրքական պետությունը եւս մեկ անգամ բացահայտ ցույց տվեց, որ այդ խավի հանդեպ վստահություն չի տածում եւ նրանց որպես «իսկական մուսուլմաններ» չի ընկալում: Կան փաստեր նաեւ, երբ, օրինակ, իսլամ ընդունած հայերը, հույները եւ հրեաները հարկվել են ոչ թե որպես մուսուլման կամ հավատափոխ, այլ որպես ոչ մուսուլման:

Սույն օրենքով նախատեսվում էր, որ մուսուլմանները վճարեն ունեցվածքի 12.5 տոկոսի չափով հարկ, ոչ մուսուլմանները՝ 50 տոկոս, հավատափոխները, այսինքն՝ իսլամացածները՝ 25 տոկոս եւ օտարահպատակները՝ 12.5 տոկոս: Քանի որ այն ժամանակվա Թուրքիայում ոչ մուսուլմանների ամենամեծ համայնքները հայերինը, հույներինը եւ հրեաներինն էին, բնականաբար, հարկն առավելապես ուղղված էր նրանց դեմ:

Հարկաչափը սահմանելու եւ հավաքելու նպատակով ստեղծվեցին հատուկ հանձնաժողովներ: Հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում, որ բոլոր հանձնաժողովականները լինեին գտարյուն թուրքեր: Ամենեւին երկրորդական չպետք է համարել, որ հանձնաժողովների կազմում կային զգալի թվով նախկին իթթիհադականներ: «Օրենքի» ամենամեծ հակահրավական դրույթներից էր այն, որ հանձնաժողովն ինքնական էր որոշում

հարկի չափը, այսինքն՝ չկար հստակ որեւէ չափանիշ: Սակայն հակաիրավական կետերն այսքանով չէին սահմանափակվում. մարդու իրավունքները կոպտորեն ոտնահարող հաջորդ նորմն այն էր, որ հարկատուն իրավունք չունէր որեւէ տեղ բողոքարկել հարկաչափը, այսինքն՝ հանձնաժողովի կամայականորեն սահմանած որոշումը բեկանման ենթակա չէր եւ վերջնական էր: Իսկ հանձնաժողովները հարկաչափը որոշելիս հաշվի չէին առնում հարկատուի իրական եկամուտները եւ հնարավորություններն ու հարկում էին նրան մոտավորապես, ըստ ցանկության եւ տրամադրության:

Չարկահավաքության գործընթացում մի շատ կարեւոր մանրամասն էլ կա, որի վրա հատկապես ցանկանում ենք ուշադրություն հրավիրել. թուրքական իշխանությունները տարբերություն էին դնում նաեւ ոչ մուսուլմանների միջեւ, եւ հայերը, մյուս ոչ մուսուլմանների համեմատ, հարկվում էին ամենաբարձր տոկոսներով եւ ամենաշատը: Այսպես, օրինակ՝ թուրք առեւտրականը պետք է վճարեր իր տարեկան եկամուտի 4.7 տոկոսը, հույնը՝ 156 տոկոսը, հրեան՝ 179 տոկոսը, իսկ հայը՝ 232 տոկոսը, եւ փաստորեն հույն առեւտրականը թուրքի համեմատ վճարում էր 31 անգամ, հրեան՝ 36, իսկ հայը՝ 47 անգամ ավելի գումար: Չարկերի վճարման համար սահմանված էր 15-օրյա ժամկետ, որը հետո երկարացվեց մինչեւ 30 օր: Այդ ընթացքում հարկը վճարել չհասցնողի շարժական եւ անշարժ գույքը պետականացվում եւ աճուրդով վաճառվում էր. մինչ այդ հենց իրենք՝ հարկատուներն էլ էին փորձում էժան գներով վաճառել իրենց ունեցվածքը: Նշենք նաեւ, որ գումարը չբավարարելու դեպքում բռնագրավման եւ վաճառքի էր ենթակա նաեւ հարկատուի մերձավոր ազգականների գույքը: Իսկ եթե այդ ձեւով ձեռք բերված գումարն էլ չէր բավարարում հարկի վճարմանը, ապա հարկատուներն արքային էին տաժանակրության, որպեսզի աշխատելով վճարեին պետության հանդեպ իրենց «պարտքը»: Իսկ տաժանակրության հիմնական վայրը ցրտաշունչ կլիմայով հայտնի Էրզրումի նահանգի Աշքալե գավառն էր, որն անվանում են նաեւ «թուրքական Սիբիր»:

Թուրքիայի կառավարության 1943թ. հունվարի 7-ի նիստում ընդունվել է թիվ 19288 աշխատանքի պարտավորության կանոնակարգը: Այն ընդգրկում էր հետեւյալ հոդվածները. 1-ին հոդվածով դասակարգվում էին ստիպողական աշխատանքի դատապարտված հարկատուները: Աշխատանքային ծամբարներ առաջինը գնալու էին ընդհանրապես հարկ չվճարածները, այնուհետեւ՝ մասնակի վճարածները, եւ այսպես շարունակ: Նախատեսվում էր տաժանակիրներին վճարել որոշակի աշխատավարձ, որը կազմելու էր օրական 250 քուրուշ, որից 60-ը պահվելու էր սննդի, կացության եւ այլ ծախսերի համար, իսկ մնացածը պետք է հատկացվեր «Ունեցվածքի հարկ»-ի պարտքի մարմանը: 15-րդ հոդվածի համաձայն՝ հարկատուները պետք է աշխատեին մինչեւ «Ունեցվածքի հարկ»-ի լրիվ մարումը: Սակայն այս կետը

շատ հարկատուների դեպքում առաջացնում էր ոչ տրամաբանական պատկեր, եւ կարելի է ասել, որ դա նախատեսում էր ցմահ տաժանակրոթյուն: Այսպես, օրինակ, այն հարկատուները, որոնց պարտքը 400-500 հազար լիրա եւ ավելի էր, որպեսզի իրենց ստացած աշխատավարձից լրիվ մուծեին պարտքը, պետք է աշխատեին մոտավորապես 1600 տարի: Ծանրարներում հավաքված հարկատուներից 1869-ը Ստամբուլից էին, 889-ը՝ Իզմիրից, 100-ը՝ Բուրսայից: Պաշտոնական տվյալների համաձայն՝ միայն Աշքալե է ուղարկվել 1400 ոչ մուսուլման հարկատու, որոնցից 1229-ը՝ Ստամբուլից: Աշքալեում հարկատուներից 21-ը (այլ տվյալներով ավելի շատերը) մահացել են:

Կարելու հարց է նաեւ, թե փոքրամասնություններից խլված, պետականացված եւ աճուրդով վաճառված գույքը ո՞ւմ ձեռքն էր անցնում. ինչպես ցույց են տալիս փաստերը, այդ ամբողջ գույքը գնել են թուրք գործարարները, թուրքական կազմակերպությունները, բանկերը եւ այն էլ՝ շատ էժան գներով: Փաստորեն, «Ունեցվածքի հարկ»-ը, կարելի է ասել, կատարեց իր առաքելությունը, այն է՝ գրեթե լիովին թուրքացրեց տնտեսությունը:

Ազգային փոքրամասնություններին նյութապես, բարոյապես, հոգեպես եւ ֆիզիկապես կոտրելուց հետո միայն թուրքական իշխանությունները, տեղի տալով նաեւ արտաքին գործոնների ազդեցությանը, որպես «բարի կամքի» դրսևորում, վերացրին «Ունեցվածքի հարկ»-ի կիրառումը:

2. Հանրապետական Թուրքիայի պատմության տարբեր ժամանակահատվածներում արձանագրված բազմապիսի հալածանքների մեջ առավել քիչ է արժարժված կամ գրեթե անտեսված է 1941թ. (ըստ տարբեր աղբյուրների՝ մայիսի 1-15-ը) թուրքական պետության կողմից երկրի ոչ մուսուլման բնակիչների հանդեպ կիրառված, այսպես կոչված, 20 դասակարգ զինակոչը: Երկրորդ համաշխարհային պատերազմի թեժ ժամանակաշրջանում թուրքական իշխանությունները հապճեպ զորակոչ հայտարարելով՝ 20 դասակարգի համաձայն «ծառայության» են տարել փոքրամասնությունների՝ հայերի, հույների, հրեաների չափահաս 18-60 տարեկան տղամարդկանց: Անխտիր զորակոչվում էին բոլորը, նույնիսկ նրանք, ովքեր նոր էին վերադարձել զինծառայությունից, հաշմանդամ էին, հիվանդ: 20 դասակարգ զորակոչի առանձնահատկությունն այն էր, որ կիրառվում էր բացառապես ոչ մուսուլման քաղաքացիների նկատմամբ: Կարելու նրբերանգներից է այն, որ զորակոչի մասին նախօրոք չի հայտարարվել. ընդամենը մի քանի ժամվա ընթացքում, առանց նախապես տեղեկացնելու, պոտենցիալ զորակոչիկներին հավաքել են:

Թուրքական աղբյուրները շեշտում են, որ զորակոչի որոշումը նախագծվել է վերին աստիճանի բժախնդրորեն, եւ հատուկ ջանքեր են գործադրվել, որ այդ որոշման մասին, բացի համապատասխան աստյաններից, հայտնի

չդառնա: Այս զորակոչի ամենակարեւոր կողմերից է այն, որ զինակոչված ոչ մուսուլման տղամարդիկ, ըստ էության, զինվոր չէին: Նախ՝ նրանց չի տրվել զենք, զինվորական կրթություն, զինվորական համազգեստ: Այդ անգն «զինվորներին» աշխատեցնում էին տարատեսակ շինարարություններում: Այդ «զինվորները» զորակոչվելուց հետո ենթարկվում էին ոչ թե Թուրքիայի պաշտպանության նախարարությանը, այլ հասարակական աշխատանքների նախարարությանը:

Ջորակոչված ոչ մուսուլմանները հիմնականում տեղակայվել էին երկրի արեւելյան շրջաններում գտնվող ճամբարներում, ուր պայմանների չափազանց վատ լինելու պատճառով տարածված էին հիվանդություններ, որոնք էլ դարձան նրանցից շատերի մահվան, հաշմվելու պատճառ: Չնայած պաշտոնական թվեր չկան մահացածների մասին, սակայն ականատես-վերապրողների եւ որոշ աղբյուրների համաձայն՝ դրանք բավական մեծ են եղել:

Չափազանց կարեւոր մի փաստի ենք հանդիպում աղբյուրներից մեկում, համաձայն որի՝ ոչ մուսուլմանների հետ միասին «զինծառայության» են տարել նաեւ կրոնափոխ հայերին: Այս փաստը ինքնին խոսում ասպացույց է, որ 20 դասակարգ զորակոչն ունեցել է հստակ էթնիկ երանգ, եւ նույնիսկ բռնի իսլամացված հայերը թուրքական իշխանությունների համար եղել են վտանգի աղբյուր: Սա նաեւ ցույց է տալիս, որ պետական կառույցները հայերի իսլամացման գործընթացի հենց սկզբից նրանց պահել են ուշադրության կենտրոնում եւ վերահսկել նրանց շրջանում տեղի ունեցող գործընթացները: Ի վերջո, նրանց իրականում մուսուլման չեն համարում:

Խոսելով 20 դասակարգ զինակոչի պատճառների եւ նպատակների մասին՝ պետք է նշել, որ սակավաթիվ աղբյուրները եւ ականատես-վերապրողների պատմածները գալիս են հաստատելու այն, որ դա էթնիկ զտում էր՝ ածանցյալ այլ նպատակներով: Որպես կարեւոր պատճառ է համարվում այն, որ այդ տարիներին թուրքական իշխանությունները, պատրաստվելով հնարավոր պատերազմի, նախօրոք հավաքել եւ չեզոքացրել են «5-րդ շարասյուն» համարվող ազգային փոքրամասնություններին: Տարբեր աղբյուրներ նշում են նաեւ, որ այս զորակոչով պետությունը նպատակ է ունեցել նաեւ որոշ ժամանակով ոչ մուսուլմաններին հեռացնել առեւտրի ոլորտից, որտեղ նրանք լուրջ դիրքեր ունեին:

3. 1955թ. սեպտեմբերի 6-7-ը Ստամբուլի, Իզմիրի հույն, հայ բնակչությունը ենթարկվել է պետության կողմից նախօրոք պատրաստված խուժանի հարձակմանը: Սրա համար պատրվակ է հանդիսացել իշխանությունների կազմակերպմամբ հրապարակ նետված այն լուրը, թե ռմբակոծվել է Սալոնիկում գտնվող Աթաթուրքի տունը: Դրանից հետո գազազած ամբոխը հարձակվել է հունական եւ հայկական թաղամասերի վրա, թալանել, այրել



տներ, խանութներ, եկեղեցիներ, խոշտանգել, բռնաբարել եւ սպանել մարդկանց: Այս ամենին թուրքական իշխանություններն արձագանքել են միայն մեկ օր հետո, երբ ամեն ինչ արդեն ավարտված էր: Չետագայում ընթացող դատական քննության ժամանակ ի հայտ եկած փաստերն ապացուցեցին, որ այդ ամենը կազմակերպված էր իշխանությունների կողմից՝ պետական ամենաբարձր պաշտոնյաների անմիջական մասնակցությամբ:

4. Թուրքիայի Հանրապետության պատմության տարբեր տարիներին (օրինակ՝ 1930-ական, 1960-ական թթ.) անցկացվել են, այսպես կոչված, «Հայրենակից, թուրքերեն խոսիր» ակցիաներ, որոնց գլխավոր թիրախը կրկին փոքրամասնություններն էին: Երիտասարդներից կազմված խմբերը շրջում էին հատկապես փոքրամասնություններով բնակեցված թաղամասերում եւ պահանջում խոսել միայն թուրքերեն. չենթարկվելու պարագայում հետեւանքներն անկանխատեսելի էին լինում: Սա իրականում դարերի պատմություն ունեցող լեզվական ձուլման քաղաքականության շարունակությունն էր:

## **ԻՐԱՆ – ԱՄՆ ԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՌԱՆԿԱՐԻ ՇՈՒՐՁ Սեւակ Սարուխանյան**

*Բ.Օրամայի հաղթանակը ԱՄՆ նախագահական ընտրություններում կարող է հանգեցնել Վաշինգտոնի մերձավորարեւելյան քաղաքականության փոփոխությունների: Օրամայի հայտարարությունը, թե պատրաստ է ուղիղ բանակցությունների մեջ մտնել Իրանի ղեկավարության հետ, կարող է որոշակի տեղաշարժեր արձանագրել Իրան–ԱՄՆ հարաբերություններում: Որոշ փորձագետներ հակված են կարծելու, որ Իրան–ԱՄՆ հարաբերություններում հնարավոր է ոչ միայն բարելավում, այլ նաեւ ռազմավարական համագործակցության հաստատում:*

*Ստորեւ կանդրադառնանք այն խնդիրներին, որոնք, մեր կարծիքով, կխոչընդոտեն մնան համագործակցության հաստատմանը:*

2008-ը իրանա-ամերիկյան հարաբերությունների հնարավոր բարելավման մասին քննարկումների համար, կարելի է ասել, «հորելյանական» է: 1998-ին, այսինքն՝ ուղիղ տասը տարի առաջ, ԱՄՆ պետքարտուղար Մ.Օլբրայթը հայտարարեց, թե Վաշինգտոնը պատրաստ է երկխոսություն սկսել Թեհրանի հետ եւ հարաբերությունների բարելավման քայլ կատարել: Օլբրայթի հայտարարությունից հետո միջազգային փորձագետների շրջանում բուռն քննարկումներ ծավալվեցին Իրան–ԱՄՆ հարաբերությունների հնարավոր լավացման մասին, որոնք մինչեւ օրս, անգամ Մ.Ահմադինեժադի նախագահ ընտրվելուց հետո, չեն դադարել:

Վերջին շրջանում, իրոք, Վաշինգտոնի եւ Թեհրանի հարաբերություններում բավական լուրջ զարգացումներ են նկատվում: Սակայն, մեր կարծիքով, իրանա-ամերիկյան հարաբերություններում որակական փոփոխություններ, առավել եւս՝ կտրուկ ջերմացում, սպասել չի կարելի, քանի որ երկու պետությունների միջեւ հակասությունները կրում են հիմնավոր եւ երկարաժամկետ բնույթ:

### **Իրաքի հիմնախնդիրը**

Թեւեւ ամերիկյան եւ իրանական դիվանագետներն արդեն մեկ տարի է, ինչ սկսել են բանակցել իրաքյան գործընթացների շուրջ, միջպետական հակասություններն այս հարցում հաղթահարելի չեն թվում: Դեռեւս

անորոշ է, թե կկատարի արդյոք Բ.Օբաման ամերիկյան զորքերն Իրաքից դուրս բերելու խոստումը: Համենայնդեպս, ամերիկյան զորքերը դեռևս Իրաքում են, եւ Վաշինգտոնի մերձավորարեւելյան քաղաքականության հիմնական բաղադրիչներից է մնում Իրաքի նկատմամբ լիակատար հսկողության հաստատումն ու պահպանումը: Իրանն այս հարցում ոչ պակաս հավակնոտ ծրագրեր ունի, մանավանդ որ ի տարբերություն ԱՄՆ-ի՝ բուն Իրաքում ունի բավական մարտունակ եւ կազմակերպված դաշնակից՝ ի դեմս բնակչության համեմատական մեծամասնությունը կազմող շիաների կրոնական եւ քաղաքական կառույցների:

Փաստորեն, այսօր Իրանն ու ԱՄՆ-ը Իրաքում միեւնույն հավակնությունն ունեն՝ հսկողություն եւ վերահսկողություն: Այսօր դեռևս որեւէ հիմք չկա կարծելու, թե կողմերից մեկը պատրաստական է զիջել մյուսին եւ հեռանալ երկրից: Եթե Վաշինգտոնի համար Իրաքից հեռանալը վտանգավոր է էներգետիկ եւ տարածաշրջանային դիրքերի պահպանման տեսակետից, ապա Իրանի համար իրաքյան զարգացումներում իր մասնակցության կասեցումն ուղղակիորեն սպառնում է պետության անվտանգությանը:

Պետության իրական ատրիբուտներից եւ ինստիտուտներից զրկված Իրաքում ցանկացած գործընթաց՝ քաղաքացիական պատերազմ, իսլամական սուննի ծայրահեղականության աճ, արաբական ազգայնականություն, կարող է անմիջականորեն ազդել Իրանի վրա: Այս առումով, Իրանը պարզապես դատապարտված է ակտիվ դեր խաղալ Իրաքում, փորձել ազդել այստեղ ընթացող գործընթացների վրա, կազմակերպել եւ աջակցել տեղի իրանամետ շիական կառույցներին:

Այս պարագայում կասկածելի է թվում իրաքյան հարցում իրանա-ամերիկյան կոնսենսուսի հնարավորությունը: Մարտավարական հարցերում Իրանի եւ Վաշինգտոնի միջեւ, իհարկե, հնարավոր են որոշակի պայմանավորվածություններ: Սակայն ռազմավարական տեսանկյունից Իրանն ու ԱՄՆ-ը իրաքյան հիմնախնդրում շարունակելու են մրցակցության եւ հակամարտության անուղղակի կողմեր մնալ:

### **«Հիզբալլահ» եւ Իսրայելի խնդիրը**

Իրան–ԱՄՆ հարաբերությունների կարգավորման տեսանկյունից անլուծելի է մնալու նաեւ լիբանանյան «Հիզբալլահ» կազմակերպության հարցը: Երկու տարի առաջ «Հիզբալլահ»–Իսրայել պատերազմը ցույց տվեց, թե որքան արդյունավետ է եղել Իրանի կողմից այս կազմակերպությանը մատուցած ռազմական եւ ֆինանսական աջակցությունը:

«Հիզբալլահին» այսօր Մերձավոր Արեւելքում եւ, մասնավորապէս, արաբա-իսրայելական հակամարտության գոտում Իրանի ազդեցության հիմնական լծակներից է, որն իր բոլոր հնարավորություններով Թեհրանի կողմից կարող է օգտագործվել ԱՄՆ-ի կամ Իսրայելի հետ ռազմական բախման պարագայում: Ակնհայտ է, որ ուղղակիորեն «Հիզբալլահը» վտանգ է ներկայացնում առաջին հերթին Իսրայելի, այլ ոչ թե ԱՄՆ-ի համար: Սակայն կասկածելի է թվում, որ Բ.Օբամայի հաղթանակից հետո ամերիկա-իսրայելական հարաբերություններում սառեցում, առավել եւս՝ ռազմավարական համագործակցության կասեցում կարծանագրվի: Բ.Օբամայի այցը Երուսաղեմ եւ այս տարվա հունիսին Յամաշխարհային հրեական կոնգրեսում կարդացած ճառը, որում նա, մասնավորապէս, ասաց, թե Երուսաղեմը բաժանման ենթակա չէ եւ պատկանում է Իսրայելին, խոսում են ԱՄՆ-Իսրայել դաշինքի հետագա պահպանման մասին:

Այս պարագայում ԱՄՆ-ը պարզապէս չի կարող գնալ Իրանի հետ հարաբերությունների որակական կարգավորման, առավել եւս՝ ջերմացման, առանց հաշվի առնելու Իսրայելի շահերը: Իսկ դա ենթադրում է ներկայիս «Հիզբալլահի» կազմալուծումը, ինչն Իրանի համար անընդունելի է, եւ նման պահանջը նշանակում է կազմալուծել սեփական բանակի մի ստորաբաժանումը:

Սպասել Իրանի եւ ԱՄՆ հարաբերությունների այնպիսի լավացման, որը կարող է Թեհրանում համոզմունք ստեղծել, թե ԱՄՆ-ը կամ Իսրայելը հետագայում չեն նախատեսի հակաիրանական քայլեր, չի կարելի: Այս պարագայում Իրանի կողմից «Հիզբալլահին» ցուցաբերվող աջակցությունը կշարունակվի:

Այսպիսով, «Հիզբալլահի» եւ Իսրայելի խնդիրը նույնպէս անլուծելի է թվում Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ հարաբերություններում:

### **Միջուկային խնդիրը**

Իրանը դանդաղ, բայց հետեւողականորեն գնում է դեպի սեփական միջուկային ռազմական ներուժի ստեղծում: Անկասկած, սեփական միջուկային հզորության ստեղծման Իրանին, առաջին հերթին, դրդում է Միացյալ Նահանգները: Բայց ո՛չ միայն: Իրանը շրջապատված է երկրներով, որոնք իր նկատմամբ ռազմական տեսանկյունից զգալի առավելություն ունեն. ՆԱՏՕ անդամ երկիր Թուրքիայի բանակն ավելի մարտունակ է եւ լավ զինված, Պակիստանը եւ Ռուսաստանը միջուկային տերություններ են: Իրանի համար բավական խնդրահարույց են

հարաբերությունները միջուկային Պակիստանի հետ. այստեղ քաղաքական զարգացումները մի օր իշխանության կարող են բերել իսլամիստ ծայրահեղականներին, որոնք Իրանի եւ շիականության նկատմամբ թշնամաբար են տրամադրված: Ըստ որոշ փորձագետների՝ Պակիստանի խնդիրն է, որ ռազմավարական եւ երկարաժամկետ առումով ստիպում է իրանական կողմին թափ հաղորդել միջուկային ծրագրին:

Այս պայմաններում, անգամ եթե Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ հարաբերություններում արձանագրվեն որոշ փոփոխություններ, դրանք չեն կարող ստիպել Իրանին դադարեցնել միջուկային ծրագիրը: Միեւնույն ժամանակ, դժվար թե կարելի է սպասել Իրանի միջուկային ծրագրի նկատմամբ ԱՄՆ դիրքորոշման փոփոխություն: Վաշինգտոնը չի կարող հանդուրժել, որ Իրանը միջուկային տերության վերածվի, ինչը կխթանի տարածաշրջանում Թեհրանի քաղաքական ազդեցության աճին եւ կհանգեցնի ամերիկյան դիրքերի զգալի թուլացման:

Այսպիսով, միջուկային խնդիրը Իրան–ԱՄՆ հարաբերություններում կմնա կոնֆլիկտային խնդիր, որի կարգավորումը բանակցություններով դժվար թե հնարավոր է:

Վերը նշված խնդիրները, մեր կարծիքով, կխոչընդոտեն Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ հարաբերությունների որակական կարգավորմանը: Սակայն դա չի նշանակում, թե դրական տեղաշարժեր իրանա-ամերիկյան հարաբերություններում առհասարակ չեն գրանցվի: Այդ տեղաշարժերը կապված կլինեն երկու պետությունների միջեւ մարտավարական հարցերում առկա ընդհանուր մոտեցումների հետ. օրինակ՝ Աֆղանստանում թալիբների ակտիվության դեմ քայլերի իրականացումը, ինչպես նաեւ Իրաքում սուեմի իսլամիստների եւ ալ-Կաիդայի դիրքերի թուլացումը: Այս հարցերում Իրանն ու ԱՄՆ-ը կարող են բավական արդյունավետ համագործակցել՝ կարճաժամկետ կամ միջնաժամկետ կտրվածքում:

Բացառված չէ, որ ԱՄՆ-ը խթանի նաեւ Իրանի էներգետիկ «մուտքը» Եվրոպա՝ որպես հակակշիռ ԵՄ-ում Ռուսաստանի ունեցած դիրքերի, ինչը մասամբ պայմանավորված է նրանով, որ վերջինս դեպի Եվրոպա բնական գազի հիմնական արտահանողն է: Վրաց-օսական հակամարտությունից հետո Ռուսաստանի աճող ազդեցությունը Վաշինգտոնի համար, կարծես թե, դառնում է առաջնային նշանակության խնդիր, որի լուծման համար կարող են օգտագործվել նաեւ Իրանի հավակնությունները՝ դառնալու ԵՄ բնական գազ ներկրող խոշորագույն պետություն:

## ՆՈՐԱԴԱՐՁ ՄԱՅՄԵԴԱԿԱՆՆԵՐ Սուրեն Մանուկյան

2008թ. հոկտեմբերի վերջին գերմանական հետախուզությունը տագնապ հայտարարեց Էրիկ Բրայնինգերի հայրենիք հնարավոր վերադարձի կապակցությամբ: Գերմանիայում ծնված 21-ամյա Բրայնինգերը, որն իսլամ էր ընդունել եւ մարզումներ անցել Պակիստանի եւ Աֆղանստանի սահմանին գտնվող ահաբեկչական ճամբարներից մեկում, հայտարարել էր, որ պատրաստվում է ինքնասպան-ահաբեկիչ դառնալ: «Իսլամական ջիհադի միության» կայքում տեղադրված տեսահաղորդագրության մեջ նա հանդես եկավ Գերմանիայում սպասվող ահաբեկչական գործողությունների նախազգուշացումով, քանի դեռ Բեռլինը դուրս չի բերել զորքերը Իրաքից եւ Աֆղանստանից:

Սա առաջին դեպքը չէր, երբ Եվրոպան դեմ դիմաց էր հայտնվում ահաբեկչական գործողությունների մեջ ներգրավված նորադարձ մահմեդականների հետ:

Նորադարձությունը (պրոզելիտիզմ) գրեթե բոլոր համաշխարհային կրոններին բնորոշ երեւոյթ է: Յուրաքանչյուր կրոն ձգտում է հնարավորին չափ շատ հետեւորդներ ձեռք բերել եւ երբեմն դիմում է այլադավաններին հավաքագրելու հնարքին:

Քրիստոնեության մեջ շատ է տարածված կրոնադարձությունն «ըստ հավատքի»։ դրա համար բավական է ընդամենը Հիսուսի Փրկչագործական առաքելության ընդունումը եւ մկրտության ծեսի անցկացումը: Սակայն միշտ չէ, որ քրիստոնեական համայնքը հեշտությամբ ընդունում է նորադարձներին: Օրինակ, մորիսկները (մկրտված մահմեդականները) կամ մարրաները (մկրտված հրեաները) Իսպանիայում կամ քրիստոնեացված հրեաները նացիստական Գերմանիայում այդպես էլ չդարձան տեղական հասարակությունների մասը:

Նույնիսկ մեր օրերում հնդիկները համոզված են, որ *հինդուիզմը* միայն հնդիկների ծննդյան իրավունքով ձեռք բերված հատկանիշ է: Ամեն դեպքում, վերջին կես դարի ընթացքում Հնդկաստանում եւ Ինդոնեզիայում ակտիվացել է նախկինում այլ կրոններ տեղափոխված ավանդական հինդուիստական ընտանիքների ներկայացուցիչների վերադարձը հինդուիզմ: Խնդիր է առաջանում միայն, երբ կրոնադարձը հնդկական

ընտանիքից չէ. այս դեպքում անհասկանալի է, թե ինչպես որոշել նորադարձ հինդուիստի կաստայական պատկանելությունը:

*Բուդդայականություն*ն ակտիվ նորադարձության կրոն է, թեև գործող դալայ-լամա Տենցին Գյատցոն չի խրախուսում առանց նախապատրաստության հավատադարձությունը: Սակայն 20-րդ դարի երկրորդ կեսից այն չափազանց գրավիչ է դարձել Արեւմուտքում՝ մշակութային գործիչների եւ Յնդկաստանում՝ ցածր կաստաների ներկայացուցիչների շրջանում (կաստայական բաժանման բացակայության պատճառով):

*Իսլամը* համարում է, որ բոլորն ի սկզբանե մահմեդական են ծնվում, սակայն մարդ երբեմն կարիք ունի լրացուցիչ քայլեր կատարել «իսկական» կրոն վերադառնալու համար:

Իսլամում կրոնափոխությունը կայացած է համարվում, երբ կատարվում է իսլամի հինգ սկզբունքներից մեկը՝ անկեղծորեն արտասանվում է շահադան, ընդունելով, որ «չկա Աստված բացի Ալլահից, եւ Մուհամեդը նրա մարգարեն է»:

Մեր օրերում իսլամում ցանկալի է նաեւ վավերացնել նորադարձությունը հատուկ փաստաթղթով, որը կարող է տրվել «վստահություն ներշնչող» իսլամական կենտրոնի, կազմակերպության կամ մզկիթի կողմից: Նման վավերագրերն անհրաժեշտ են ամուսնության հաստատման, ինչպես նաեւ Մեքքա եւ Մեդինա ուխտագնացություն կատարելու համար: Նորադարձ մահմեդականը պետք է ծանոթանա իսլամական պրակտիկային եւ կատարի մշտապես աղոթելու պահանջը:

Մի շարք կրոններ կամ կրոնական հոսանքներ՝ *դրուզները, եզդիները, մանդեյները*, արգելում են հավատափոխության ցանկացած ձեւ:

*Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը* կրոնափոխությունը համարում է յուրաքանչյուր մարդու ազատություններից մեկը՝ հենվելով խղճի ազատության հիմնարար ազատության վրա:

### **Իսլամական վերածնունդ**

20-րդ դարում իսլամը չափազանց ակտիվ եւ հաջող կերպով տարածվեց ամբողջ աշխարհում: Հատկապես շեշտակի էին աճի տեմպերը Աֆրիկյան մայրցամաքում եւ աֆրոամերիկացիների շրջանում: Տասնյակ հազարներով են հաշվարկվում քրիստոնեությունից տեղափոխված նորադարձ մահմեդականները Եվրոպայում:

Կան մի քանի հիմնական պատճառներ, որոնք խթանում են իսլամին անցնելու գործընթացը:

Իսլամը հասկանալի է. Ղուրանն ու շարիաթը պատասխաններ են

տալիս գրեթե բոլոր հարցերին: Այս կրոնում մարդը շրջապատված չէ խորհրդավոր, հասարակ մահկանացուին անհասանելի երեւոյթների եւ արարողակարգի պատմեշով:

Մյուս կողմից՝ ինտելեկտուալների համար իսլամում նույնպես կա հանգրվան՝ սուֆիզմը, որտեղ կարելի է գտնել ասկետիզմով եւ բարձր հոգեւոր պոեզիայով պարուրված բազմադարյա մշակույթ:

Չետաքրքիր է, որ իսլամի գրավչության գրավականներից է համարվում նաեւ նրա ավանդապաշտութիւնը: Երբ քրիստոնեական գրեթե բոլոր ուղղութիւնները շեշտը դրեցին վերափոխման վրա՝ ավելի հասկանալի դառնալու համար, նրանք սկսեցին կորցնել հավատացյալներին: Նորադարձներից շատերն այս ճանապարհով փորձում են փախչել արեւմտյան նյութական, սպառողական հասարակութունից:

Ամենաշատը իսլամ են ընդունում այն քրիստոնյաները, որոնք ապրում են մուսուլմանական շրջապատում: Հաճախ այլ մշակույթով, ավանդույթներով եւ կրոնով շրջապատված մարդն իրեն լքված, օտարված է զգում: Այս խնդիրների ամենաարդունավետ լուծման համար նա դիմում է քայլերի, որոնք կարող են բարելավել եւ ամրապնդել իր դիրքը հասարակութունում՝ ընդունում է մեծամասնության կրոնը եւ դրանով ապահովում իր մուտքը համայնք (ումմա): Համայնքում նորադարձ մուսուլմանը նոր շրջապատ է ձեռք բերում, ընկերակցութիւն եւ հովանավորութիւն: Ումման ունի ներքին գաղափարախոսութիւն, որը նորադարձի գոյութանն իմաստ է տալիս, եւ նոր մանմեղականը շուտով իրեն ումմայից դուրս չի պատկերացնում:

Շատ հաճախ իսլամ են ընդունում անուսնութունից հետո: Իսլամը պարտադրում է, որ մահմեդական աղջկա հետ անուսնացողն ընդունի մուսուլմանութիւն, եւ այս դրույթը, որպէս կանոն, պահպանվում է: Մահմեդականի հետ անուսնացող այլադավան աղջկա դիմաց շարիաթը նման պարտադրանք չի դնում, սակայն կրոնափոխութիւնն այս դեպքում մեծ մասամբ տեղի է ունենում:

Ձանգվածաբար իսլամ ընդունելու պատճառներից է նաեւ եռանդուն իրականացվող միսիոներական գործունեութիւնը: Կիրառվում են ամենաբազմազան մեթոդներ եւ հնարքներ, օգտագործվում միջազգային մուսուլմանական կազմակերպութիւնների հսկայական դրամական միջոցները:

ԱՄՆ-ում մահմեդական քարոզիչները հիմնական շեշտը դնում են բանտերի վրա: Օրինակ՝ Սաուդյան Արաբիայի դեսպանատունը Ղուրան եւ իսլամի մասին նկարահանված տեսաֆիլմեր է ուղարկում ամերիկյան բանտեր: Արաբերենի ուսուցիչներ, իսլամի կանոններին համապա-



տասխան կերակուր եւ հատուկ «Բացահայտիր քեզ համար իսլամը» կրթական փաթեթներ են մատակարարվում:

Ձանգվածաբար կառուցվում են մզկիթներ, որոնք անմիջապես դառնում են քարոզչության կենտրոններ եւ հետագայում ավելացնում նորադարձների թիվը: Վերջիններս շատ արագ խմբեր են ձեւավորում, դառնում իմամներ եւ ակտիվորեն քարոզում հայրենակիցների շրջանում: Որոշ թվով նորադարձներ առաջանում են զբոսաշրջության հետեւանքով:

Իսլամն ակտիվորեն տարածվում է այն երկրներում, որտեղ կրոնի դիրքերն այդքան էլ անուր չեն: Օրինակ, շնորհիվ ակտիվ մուսուլմանական քարոզչության, Ֆրանսիան այսօր ունի ամենամեծ թվով իսլամական կրոնափոխներ՝ մոտ 50-70 հազար (բուդդայականությունը ընդունածների թիվն այս երկրում երկու անգամ ավելի մեծ է): Գաղտնիքը ոչ այնքան իսլամի հատուկ քաղաքականության, որքան ֆրանսիական հասարակության ներսում առկա խնդիրների մեջ է. աշխարհիկությունը կտրում է կապը քրիստոնեական մշակութային եւ կրոնական ժառանգության հետ:

### **Ահաբեկչության նոր զինվորները**

Կրոնադարձները վերջին տարիներին հայտնվել են միջազգային լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում, քանի որ ահաբեկչական գործողություններին շատ հաճախ մասնակցում կամ փորձում են մասնակցել կրոնափոխ մահմեդականներ:

Միջազգային հակաահաբեկչական քաղաքականության ինստիտուտի ավագ գիտաշխատող Լեուվեն Պազը համարում է, որ «նոր մահմեդականներն» ավելի հաճախ են ներգրավվում ահաբեկչական գործողությունների մեջ: Նրանք իսլամի «նոր գաղտնի զենքն» են:

Այս մասին է վկայում 2005թ. նոյեմբերին իսլամիստական կայքերից մեկում զետեղված «Չամաշխարհային իսլամական մեդիա-ճակատի» հայտարարությունն այն մասին, որ «ալ-Կաիդայի նոր զինվորները ծնվել են Եվրոպայում՝ եվրոպական քրիստոնեական ծնողներից: Նրանք ալկոհոլ են օգտագործում եւ խոզի միս են ուտում, բայց ալ-Կաիդան ընդունում է նրանց, քանզի նրանք ընդունեցին իսլամը գաղտնի, ընդունեցին ալ-Կաիդայի փիլիսոփայությունը եւ պատրաստ են զենք կիրառել: Նրանք քայլում են Եվրոպայի եւ Ամերիկայի փողոցներով եւ նոր հարձակումներ նախապատրաստում»:

Տարբեր տվյալներով՝ նորադարձները կազմում են միջազգային ահաբեկչական կազմակերպությունների 3-8 տոկոսը:

Առաջին օրինակը 2001թ. Աֆղանստանում ձեռքակալված Ջոն Ուոլքեր

Լինդն (նույն ինքը՝ Խամզան կամ Սուլեյման ալ-Ֆարիս) էր, որն իսլամ էր ընդունել Լոս Անջելեսում եւ համալրել Թալիբանի շարքերը:

Դրանից մի քանի շաբաթ անց անգլիացի Ռիչարդ Ռեյդը (Թարիք Ռաջա կամ Աբդել Ռահիմ), որն իսլամ էր ընդունել բանտում, փորձեց կոշիկի մեջ տեղադրված ռումբի միջոցով պայթեցնել Փարիզից Մայամի թռչող ուղևորատար օդանավը:

2002թ. մայիսին ամերիկյան հատուկ ծառայությունները ձերբակալեցին Խոսե Պադիլային (Աբդուլա ալ-Մուհաջիր), որը նույնպես իսլամ ընդունել էր բանտում եւ ծրագրել էր ալ-Կաիդայի հանձնարարությամբ «կեղտոտ» ստոմային ռումբի պայթյուն իրականացնել ԱՄՆ-ում:

Նորահայտ մահմեդական էր նաեւ 2001թ. սեպտեմբերի 11-ի գործով միակ դատապարտվածը՝ Ջաքարիա Մուսաուին, ինչպես նաեւ 2005թ. նոյեմբերին Իրաքում կին ինքնասպան-ահաբեկիչ, բելգիացի Մյուրիել Դեգոքը:

Ահաբեկչության ճանապարհին կանգնած նորադարձ մահմեդականներ ձերբակալվել են ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, ՅուՆԱԿ-ում, Գերմանիայում, Ավստրալիայում, Բելգիայում, Իսպանիայում, Շվեյցարիայում, ՅուՆԿԵՍ-ում եւ Ֆիլիպիններում:

Թեեւ մինչ այժմ մեծ մասամբ հնարավոր է եղել կանխել նորադարձների կազմակերպած ահաբեկչական գործողությունները, սակայն նրանց հիմնական նպատակներից մեկը՝ արեւմտյան հասարակություններն ահաբեկելը, իրականացավ: Եվրոպացիները եւ ամերիկացիները սարսափի մեջ են՝ թշնամին վերջնականապես ձուլվել է ամբոխում: Պարզ է դարձել, որ ահաբեկիչ կարող է լինել ոչ թե օտարազգի, արեւելյան արտաքին ունեցող մեկը, այլ ընդհանրապես յուրաքանչյուր անցորդ:

Հիմնական վտանգը գալիս է նրանց «եվրոպական արտաքինից», որը թույլ է տալիս ավելի հեշտությամբ խառնվել ամբոխի հետ եւ աչքի չընկնել եվրոպական քաղաքներում: Բացի այդ, ունենալով եվրոպական քաղաքացիություն՝ նրանք առանց դժվարության կարող են տեղափոխվել Եվրոպայի ցանկացած երկիր եւ ԱՄՆ՝ օգտագործելով հեշտացված վիզային ռեժիմը եւ խուսափելով մաքսային ձեւականություններից: Եվրոպայում ծնված եւ մեծացած նորահայտ մահմեդականները նաեւ չեն առանձնանում ընդհանուր միջավայրից՝ շնորհիվ իրենց լեզուների, կենսաձեւի եւ արեւմտյան երկրների սովորույթների լավ իմացության:

Վերլուծելով նորադարձների կենսագրությունները՝ կարելի է մի քանի ընդհանրություն նկատել: Նրանք հիմնականում սերուն են անբարեկեցիկ ընտանիքներից, ընդամենը հինգերորդ մասը բարձրագույն կրթություն ունի, իսկ իսլամ ընդունել են շատ երիտասարդ տարիքում: Նրանց 80

տոկոսը նախկինում տարբեր հանցանքների համար ձերբակալվել է. շատ դեպքերում նոր կրոնի ընդունումը նոր կյանք սկսելու փորձ է: Նրանք բավարարված չեն ժամանակակից հասարակության վիճակով եւ փորձում են ճանապարհ գտնել այս հասարակությունը փոխելու համար: Նրանք իսլամում գտնում են համապատասխան միջավայր:

Նորադարձ մահմեդականների սոցիալական պատկերը հստակ տարբերվում է մահմեդական երկրներում ծնված իսլամական ահաբեկիչներից, որոնք հիմնականում միջին եւ բարձր դասի ներկայացուցիչներ են, բավական չափավոր կրոնական հայացքներ ունեցող ընտանիքներից: Նրանց մեծ մասը բարձրագույն կրթություն ունի, եւ շատ քչերն ունեն քրեական անցյալ:

Հավատափոխ մահմեդականները հաճախ աչքի են ընկնում այլ հայացքների նկատմամբ ընդգծված անհանդուրժողականությամբ, ավելի ծայրահեղ են եւ հակված զոհաբերության, ինչով փորձում են ապացուցել հավատարմությունը նոր կրոնին: Հենց սա էլ օգտագործվում է ծայրահեղական իսլամական կազմակերպությունների կողմից:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ գաղափարախոսական փակուղում հայտնված Եվրոպան ապրում է հավատափոխության մի շրջան, երբ մեծ չափերով իսլամ են ընդունում բուն եվրոպացիները:

Բացի այդ, եթե նախկինում ահաբեկչական գործողություններ իրականացնելու համար օգտագործվում էին Եվրոպայում ծնված, բայց ավանդական մահմեդականները (օրինակ՝ հոլանդական ռեժիսոր Թեո վան Գոգի սպանության կամ Մադրիդում եւ Լոնդոնում ահաբեկչական գործողություններ իրականացնողները), ապա այժմ մարտավարություն է դարձել հավատափոխ բնիկ եվրոպացիների հավաքագրումը եւ օգտագործումը:

Մինչեւ վերջին ժամանակները ջիհադը եւ նրա ծնած ահաբեկչությունն ընկալվում էին իբրեւ երեւույթ, որն առաջանում է աշխարհի մեկուսացված եւ «հիվանդ» ծայրամասերում, իսկ հետո արտահանվում Արեւմուտք. այս դեպքում կարելի էր պատմեշվել այդ վտանգավոր աշխարհամասերից կամ փորձել լուծել խնդիրը հենց իր աղբյուրում: Հիմա իրավիճակն այլ է, քանի որ արմատական իսլամիզմի աղբյուրը նաեւ Եվրոպայում է, եւ այս պատճառով դրա դեմ պայքարելն անհամեմատ ավելի դժվար է դառնում:

## **ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՐԴԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ**

### **Արաբս Փաշայան**

*Իսլամական աշխարհում կանանց հիմնախնդիրները բավական տարողունակ են եւ ներառում են հասարակության մեջ կնոջ վարքաբանությանը, նրա դերին, սոցիալական եւ քաղաքական իրավունքներին վերաբերող հարցեր: Մասնավորապես, արաբական հասարակություններում կանանց վերաբերող եւ այլեւս օրակարգային դարձած հարցադրումները ցուցիչ են՝ հասկանալու համար արդի իսլամական աշխարհի մի շարք կարեւոր երեւույթներ:*

*Արաբական իսլամական աշխարհում կանանց հիմնահարցերի ուսումնասիրությունը մեզանում կարեւոր է հատկապես այն առումով, որ Հայաստանը գտնվում է մերձավորարեւելյան տարածաշրջանի անմիջական հարեւանությանը, ինչը հրատապ է դարձնում իսլամական աշխարհին (եւ առաջին հերթին՝ Հայաստանի հարեւան իսլամական երկրներին) բնորոշ իրողությունները համապարփակ հասկանալու անհրաժեշտությունը:*

Քաղաքական տարբեր համակարգեր եւ հասարակական զարգացման տարբեր միտումներ ունեցող արաբական երկրներում կանանց խնդիրները դրսևորվել են տարբեր ձեւաչափերով եւ որոշակիորեն քաղաքականացվել են: Հատկանշական է, որ դրանք դարձել են թե՛ աշխարհիկ ազգայնական եւ թե՛ իսլամական հռետորականության կարեւոր բաղկացուցիչը:

Մերձավոր Արեւելքի արաբական առանձին պետություններ արդեն 1950–1960-ականներին (անկախության ձեռքբերումից հետո) ձեռնամուխ եղան իրավական բարեփոխումների: Արաբական մի շարք երկրներում, ինչպես, օրինակ՝ Սիրիայում, Իրաքում, Լիբանանում, Ալժիրում, Եգիպտոսում, աշխարհիկության ամրապնդումը կնոջն առաջին հերթին հնարավորություն տվեց դառնալ երկրի հասարակական, քաղաքական եւ տնտեսական կյանքի մասնակիցը, ինչը շատ հաճախ քննադատվում էր աշխարհիկ վարչակարգերին ընդդիմադիր կրոնաքաղաքական ուժերի կողմից: Հատկանշական է, սակայն, որ իրավական մի շարք նորմեր, որոնք վերաբերում են ամուսնությանը, ապահարզանին, զավակների խնամակալությանը եւ ժառանգությանը, հիմնականում վերցվեցին շարիաթից: Այս ոլորտները դարձան կանանց իրավունքների համար պայքարող շրջանակների հիմնական թիրախներից մեկը: Պատահական չէ, որ 1980-ական-

ներին ստեղծվեց «Կանայք իսլամական օրենքների տիրապետության տակ» շարժումը, որը հետագայում վերաճեց ցանցային կառույցի եւ ներկայումս գործում է շուրջ 70 երկրում: Շարժման անդամների կարծիքով՝ իրենք ապրում են զրված ու չզրված, Ղուրանի տարբեր մեկնաբանություններով ու տեղական ավանդույթներով հագեցած, ինչպես նաեւ քաղաքական շարժառիթներով պայմանավորված օրենքներով, ինչը հանգեցնում է կնոջ նկատմամբ խտրականության դրսևորմանը:

Կանանց հիմնահարցերի շուրջ քննարկումներն արաբական աշխարհում ձեւավորեցին հասարակական դիսկուրս, որի մեջ բազմաթիվ շերտերի հայտ եկան:

Ազգայնականները կնոջ իրավունքները դիտարկում են աշխարհիկության եւ սեռային հավասարության սկզբունքների շրջանակում, ինչն ավելի մոտ է միջազգային ֆեմինիզմի գաղափարախոսությանը:

Աշխարհիկ ֆեմինիզմի համոզմամբ՝ իսլամը եւ կանանց իրավունքները հակասում են միմյանց, քանի որ իսլամում գոյություն ունի զարգացած սեռային հիերարխիա: Աշխարհիկ ֆեմինիզմը կանանց խնդիրներին մոտենում է արեւմտյան ժողովրդավարության հայեցակարգի դիրքերից:

Կնոջ իրավունքների նկատմամբ իսլամական դիրքորոշումը տարողունակ է եւ ամփոփված տիպաբանորեն միմյանցից որոշակիորեն տարբերվող պահպանողական, ծայրահեղական եւ մոդեռնիստական մոտեցումներում:

Պահպանողական հոսանքների ներկայացուցիչները կնոջ հիմնախնդիրների հարցում առաջնորդվում են բացառապես տեքստով (Ղուրանով) եւ իսլամական այլ սկզբնաղբյուրներով: Նրանք կնոջ համար պարտադիր են համարում իսլամական ավանդույթներն ու շարիաթական նորմերը՝ որպես աներկբա իրողություններ: Ըստ այդմ՝ տղամարդն ու կինը ֆիզիոլոգիապես տարբեր են, նաեւ տարբեր առաքելություններ ունեն, ինչը նշանակում է, որ կնոջ գործառույթները սահմանափակվում են հիմնականում ընտանեկան ոլորտում: Պահպանողականների համոզմամբ՝ այն, ինչ ստեղծված է իսլամի իրավական դաշտում, աստվածային ծագում ունի, անփոփոխ է եւ ֆունդամենտալ:

Ծայրահեղականները հարում են պահպանողականներին, սակայն այլ՝ բավական կոշտ մեթոդաբանություն ունեն: Իրենց տեսանկյունից բարոյագրված կանանց նկատմամբ թույլատրելի են համարվում ահաբեկումը եւ հալածանքները: Թե՛ ծայրահեղականները եւ թե՛ պահպանողականները համոզված են, որ կանանց վերաբերող օրակարգերը ներմուծվում են Արեւմուտքից, հետեւաբար դրանք անընդունելի՝ օտար արժեքներ են:

Այս համատեքստում ուշադրության են արժանի հատկապես իսլամական մոդեռնիստները կամ ֆեմինիստները, որոնք կանանց իրավունք-

ների համար պայքարող ամենամեծ խմբերն են: Կարելի է ասել, որ իսլամական ֆեմինիզմը իսլամի ներսում ձեւավորված ամենալիբերալ շարժումներից մեկն է:

Իսլամական ֆեմինիստները կանանց հիմնահարցերը եւ սեռային հավասարության խնդիրները մեկնաբանում են իսլամի տեսանկյունից: Նրանք կիսում են իսլամի հիմնարար արժեքները, սակայն առաջ են քաշում սուրբ գրքի եւ իսլամական այլ սկզբնաղբյուրների՝ այդ թվում *հադիսների* նորովի մեկնաբանության գաղափարը, ինչն ի հայտ է բերում տղամարդու եւ կնոջ հավասարության սկզբունքը՝ վեր հանելով այն իրողությունը, որ իսլամը համատեղելի է արդիականության հետ: Իսլամական ֆեմինիզմը մի կողմից մարտահրավեր է նետում իսլամական սկզբնաղբյուրների ավանդական մեկնաբանություններին, մյուս կողմից՝ դրանց ավանդական մեռաշնորհն ունեցող կրոնական էլիտաներին:

Իսլամական ֆեմինիստների համոզմամբ՝ իսլամի ձեւավորման վաղ փուլում կանայք զգալի դեր են խաղացել բանավոր տեքստերի կազմման հարցում, իսկ իսլամի հաստատումից եւ իսլամական պետության ստեղծումից հետո նրանց դերը աննշմար է դարձել: Կանայք դուրս են մղվել սուրբ գրքի մեկնաբանության ոլորտից: Արդյունքում՝ կանանց առնչվող իրավական տեքստերը մեկնաբանվել են արական մղումով, տղամարդու տեսանկյունից, ինչն աղճատել է իսլամի էգալիտար ոգին:

Փաստորեն, մոդեռնիստներն իսլամական իրավունքների ռեֆորմացիան դիտարկում են որպես կանանց նկատմամբ առկա խտրականությունը հաղթահարելու հիմնական միջոցներից մեկը՝ իսլամական իրավունքի նկատմամբ առաջարկելով նոր մոտեցում, ինչը կնպաստի կնոջ իրավական եւ սոցիալական իրավունքների համարժեքացմանը: Նրանք ձգտում են վերականգնել այն, ինչը, համոզված են, կորսվել կամ մարգինալացվել է իսլամի պատմության ընթացքում: Նրանք պայքարում են, որպեսզի կինը սոցիալացվի՝ կրթություն ստանա, աշխատի, հնարավորություն ունենա զբաղվել գործարարությամբ, հասարակական-քաղաքական գործունեությամբ: Իսլամական ֆեմինիզմն, ըստ էության, ավելի շատ եզրեր ունի աշխարհիկ ֆեմինիզմի, քան իսլամական պահպանողական գաղափարների հետ:

Կանանց խնդիրների նկատմամբ իրենց դիրքորոշումն ունեն նաեւ պետությունները, քաղաքական եւ կրոնական ընտրանիները: Օրինակ՝ Սիրիան, որ իսլամական երկիր է, կանանց խնդիրների հարցում ունի առավելապես աշխարհիկ մոտեցում: Իսկ Սաուդյան Արաբիայի Թագավորությունն առանձնանում է կանանց նկատմամբ բազմաթիվ, այդ թվում՝ ընտրական իրավունքի սահմանափակումներով: Երկրում հասարակական-քաղաքական բարեփոխումների գաղափարին, որպես կանոն, ընդդիմանում է վահաբական կրոնական վերնախավը:

Հատկանշական է, որ որոշակի քաղաքական բաղադրիչ պարունակող կանանց հիմնահարցերը կարելի էր տեղ են զբաղեցնում արաբական վարչակարգերի եւ դրանց ընդդիմադիրների քաղաքական օրակարգում: Օրինակ՝ 1980-ականներին Ալժիրի իշխանությունները որոշակիորեն ընդառաջ գնացին իսլամիստների պահանջներին եւ երկրի օրենսդրության մեջ կանանց իրավասություններին առնչվող շարիաթական նորմեր մտցրին: Իսկ, օրինակ, Քուվեյթում կանանց իրավապաշտպան շրջանակներին 2005-ին ի վերջո հաջողվեց երկրի օրենսդրության մեջ ամրագրել ընտրություններին կանանց մասնակցության իրավունքը: 1992-ից կանանց ընտրական իրավունք շնորհելու նախագիծը ներկայացված էր Քուվեյթի Ազգային ժողովում, սակայն խոչընդոտվում էր պահպանողական մոտեցում ունեցող պառլամենտականների կողմից: 1996թ. Ազգային ժողովի պառլամենտական Ահմադ Բաքիրը վկայակոչեց 1985-ին հրապարակված մի ֆեթվա, որտեղ նշված է, որ կանայք քաղաքական կյանքի համար պիտանի չեն:

1994-ին կանանց իրավապաշտպան շրջանակներին հաջողվեց իրավական բարեփոխումներ իրականացնել Մարոկկոյի ընտանեկան օրենսգրքում, որ վերաբերում էր բազմակնությանը, ամուսնությանը եւ ապահարզանին: Արդյունքում՝ կնոջ ամուսնության տարիք սահմանվեց տասնութը, կնոջն իրավունք տրվեց ապահարզանվել այն նույն հիմքով, ինչ տղամարդուն, իսկ բազմակնության պայմանները սահմանափակվեցին եւ խստացվեցին:

Կանանց խնդիրների հարցում բավական հանգուցային նշանակություն ունեն հենց կին գործիչները, կանանց կազմակերպությունները: Նրանք տարբերվում են միմյանցից իրենց հարցադրումներով, աշխարհիկ եւ կրոնական աշխարհընկալումներով: Արաբ կանանց խմբերից շատերը գործում են արաբական սփյուռքում, մասնավորապես՝ Արեւմուտքում, որտեղ գործունեության անհամեմատ ավելի լայն հնարավորություններ կան: Արաբ կանանց կազմակերպություններից շատերը պայքարում են նաեւ արաբական իսլամական աշխարհին սպառնացող արտաքին մարտահրավերների դեմ:

Ներկայումս արաբական հասարակությունները որոշակի երկընտրանքի առաջ են՝ ընտրություն կատարել ավանդական եւ արդիական արժեքների ու կենսակերպերի միջեւ: Փաստորեն, մի կողմից կա տեքստը՝ որպես նորմատիվ, մյուս կողմից՝ պարտադրող ներկան: Եվ այս առումով, արաբական իսլամական աշխարհում պայքարը պահպանողականության եւ արդիականության կողմնակիցների միջեւ, ամենայն հավանականությամբ, դեռ երկար ժամանակ հանգուցալուծում չի ունենա:

## **ԱՄՆ ՇԱՐՅԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ**

### **Յուրի Պանասիկ**

*Հետխորհրդային տարածքը Ռուսաստանի համար խնդրահարույց է: Այս տեսանկյունից օգտակար է դիտարկել, թե նորանկախ պետություններում ինչպես է ներկայացնում իր շահերը եւ ինչ գործիքներ է օգտագործում ԱՄՆ-ը:*

ԱՄՆ-ը կառուցել է սեփական շահերի ներկայացման ու առաջնդման բազմամակարդակ ուղղաձիգ համակարգ: Համակարգող եւ ուղղորդող օղակը պետությունն է:

Առաջին մակարդակում տեղադրված են պետական մարմինները՝ Ազգային անվտանգության խորհուրդը, փոխնախագահի վարչակազմը, սակայն, ամենից առաջ, Պետդեպարտամենտը՝ հետխորհրդային (եվրասիական) տարածքին վերաբերող ծրագրերի ռազմավարն ու մշակողը եւ, միաժամանակ, այդ ոլորտի բյուջետային միջոցների հիմնական բաշխողը:

Գործնականում հարցերի ու հետաքրքրությունների ողջ սպեկտրը՝ ՆԱՏՕ-ից մինչեւ ժողովրդավարության հաստատում, ծածկվում է պետական մակարդակով, եւ գործի են դրվում բոլոր միջոցները՝ ոչ կառավարական կազմակերպություններից (ՈԿԿ) մինչեւ կոնգրեսականների ու սենատորների այցերը:

Երկրորդ մակարդակը ոչ պետական հատվածն է: Այն գործիքների ամբողջությունն է՝ կատարողներ, որոնք, ըստ էության, իրականացնում են Պետդեպի եւ ԱՄՆ մյուս գերատեսչությունների քաղաքականությունը: Որպես կանոն, նրանք ենթարկվում են պետական որոշումների աստիճանակարգին ու խիստ հազվադեպ են շեղվում «կուսակցության ուղեգծից»: Այն ՈԿԿ-ների առանձնահատուկ եւ առավել ազդեցիկ խումբ է, որն ստանում է պետական ֆինանսավորում:

ՈԿԿ-ների մեջ առանձնանում է կազմակերպությունների երկու տիպ: Առաջինը հասարակական միավորումներն են, որոնք, որպես օրենք, զբաղվում են քաղաքական հարցերով (ժողովրդավարության տարածում, քաղտեխնոլոգիաների, ընտրական գործընթացի ուսուցում եւ այլն) եւ հազվադեպ՝ բարեգործությամբ, եթե ղեկավարության մեջ մտնում է



պետության առաջնորդների մերձավոր շրջապատը (օրինակ՝ նրանց հարազատները):

Երկրորդ տիպը ուղեղային կենտրոններն են կամ, այսպես կոչված, ամերիկյան think tank-երը: Նրանց համար ազդեցության չափորոշիչներն են կուսակցական կողմնորոշումը, գոյատևման ժամկետը (ոչ մեկ տարի) ու երկրում համակարգված աշխատանքը (կանոնավոր փաստաթղթեր, մասնաճյուղի առկայություն, փորձագետների խումբ):

Հատկապես առանձնանում են Միջազգային հանրապետական ինստիտուտը (տնօրեն՝ սենատոր Ջոն Մակքեյն), որը ֆինանսավորվում է ԱՄՆ կառավարության կողմից, «Հանուն ժողովրդավարության» ազգային հիմնադրամի միջոցով եւ Ազգային ժողովրդավարական ինստիտուտը (տնօրեն՝ ԱՄՆ նախկին պետքարտուղար Մադլեն Օլբրայթ), որը ֆինանսավորվում է Պետդեպին առընթեր Միջազգային զարգացման գործակալության եւ դեմոկրատական կուսակցության կողմից:

Ընդհանուր առմամբ, քաղաքական կուսակցությունների հետ փոխգործակցության ընթացքում ամերիկյան ՈԿԿ-ներն անցկացնում են հավանական ու խոստումնալից առաջնորդների ակտիվ «ուսումնասիրություն» եւ հայտնաբերում:

Ընտրախավերի հետ աշխատանքի ոլորտում Վրաստանի օրինակն առավել ցուցադրական է: Այստեղ ՈԿԿ-ները ոչ միայն ուսուցանել են ընտրանուն, այլև ձեւավորում են այն, ստեղծում հնարավորություններ նրա թարմացման համար:

Սահակաշվիլու շրջապատում առավել ազդեցիկ է այսպես կոչված Ազատության ինստիտուտի խմբավորումը, որը կազմված է համանուն ՈԿԿ-ի անդամներից կամ կողմնակիցներից, որոնք ունեն լայն կապեր ԱՄՆ-ում ու Եվրոպայում՝ հատկապես ժողովրդավարական հեղափոխությունների արտահանմամբ զբաղվող քաղաքական եւ հասարակական շրջաններում: Ինստիտուտի անդամները Սահակաշվիլու վրա աշխատել են դեռևս 1995 թվականից, երբ նա ԱՄՆ-ից վերադառնալուց հետո առաջին անգամ հայտնվեց քաղաքական ասպարեզում: Ինստիտուտը վարդերի հեղափոխության գլխավոր ճարտարապետներից է: Սահակաշվիլու իշխանության գալուց հետո ինստիտուտն սկսեց նախագահական «ինտելեկտուալ շտաբի» դեր խաղալ: Հեղափոխությունից հետո ինստիտուտի առաջնորդները եւ նրա հետ ասոցիացված մարդիկ զբաղեցրին մի շարք ազդեցիկ պաշտոններ:

Այսպիսով, իր շահերի առաջադրման համար ԱՄՆ-ը եռանդագին օգտագործում է ՈԿԿ-ների աշխատանքների մեխանիզմը, ինչը չես ասի Ռուսաստանի մասին: Ընդ որում, ՈԿԿ-ները գործում են թե՛ որպես

այլընտրանք կուսակցություններին եւ թե՛ իբրեւ երկրում դրանց ձեւավորման ակունք: ՈԿԿ-ները նաեւ ԱՄՆ-ին լոյալ վերնախավերի համար կադրային նստարան են եւ նոր ընտրանու հավաքագրման աղբյուր:

Այնուամենայնիվ, նշենք, որ արդյունավետության տեսանկյունից նման գործիքն անթերի չէ: Այն, որպես կանոն, աշխատում է այնպիսի երկրում, որտեղ թուլացած է կենտրոնական իշխանությունը, ոչ առեւտրային հատվածի գործունեությունը կարգավորվում է հարաբերականորեն ազատական օրենսդրությամբ, համեմատաբար մեծ չեն ուժային մարմինների հնարավորությունները: Այդ պատճառով, ամերիկյան ՈԿԿ-ներն ազդեցիկ են Ղրղըզստանում, Վրաստանում եւ Ուկրաինայում, ավելի քիչ ազդեցիկ՝ Ղազախստանում, Ադրբեջանում: Գործնականում ազդեցություն չունեն թուրքմենստանում, Ուզբեկստանում, Բելառուսում:

Կարելու է նշել, որ Պետդեպի հետ կապված ՈԿԿ-ները եւ ուղեղային կենտրոնները հաղորդակից անոթներով համակարգ են: Այդպիսի համակարգ Ռուսաստանում մշակված չէ (առավել եւս, որ ռուսաստանյան մարմինները նորանկախ պետություններում այդ գործիքները չեն օգտագործում): ԱՄՆ-ում այս կամ այն երկրի, տարածաշրջանի կամ թեմատիկ հարցերի գծով պետական հատվածի մասնագետները հաճախ անցնում են ՈԿԿ-ներ եւ հակառակը: Հետխորհրդային երկրների ԱՄՆ նախկին շատ դեսպաններ հետագայում դառնում են նշանավոր փորձագետներ, եւ նրանց փորձը պետության կողմից պահանջարկ է վայելում, ընդ որում՝ ինստիտուցիոնալ կերպով: Ռուսաստանում պաշտոնյայի հեռանալը ՈԿԿ ընկալվում է որպես աքսոր: Անգամ պետական մարմիններում հետխորհրդային ուղղությամբ աշխատանքը հեղինակավոր չի համարվում, չնայած նրան, որ հետխորհրդային տարածությունը պաշտոնապես առաջնային հետաքրքրությունների գոտի է:

Երրորդ մակարդակը լոբբիստական կազմակերպություններն են (իրավաբանական, GR եւ PR կազմակերպություններ): Լոբբիստական ծառայությունների շուկան ԱՄՆ-ում խիստ զարգացած է: Այստեղ առանձնանում է կազմակերպությունների մի խումբ, որը մասնագիտանում է այսպես կոչված զարգացող ու երրորդ երկրներում շահերի առաջադրման մեջ: Իրենց շահերը Վաշինգտոնում պաշտպանելու համար հետխորհրդային պետությունների առաջնորդները հաճախ են դիմում նրանց ծառայություններին: Բայց չնայած այդ հատվածի հանդեպ մեծ հետաքրքրությանը, նրա ազդեցությունը չի կարելի չափազանցել: Այն սաստիկ կախվածության մեջ է Պետդեպից, պետական այլ մարմիններից եւ հիմնականում կատարում է միջնորդական գործառնություններ:

Կադրերի հոսք պետական ծառայությունից դեպի լոբբիստական

կազմակերպություններ եւ հակառակը նույնպես հնարավոր է: Այսպես, Եվրոպայի ու Ասիայի հարցերով պետքարտուղարի նախկին տեղակալ Էլիզաբեթ Ջոնսն աշխատել է կասպյան տարածաշրջանի գծով հատուկ խորհրդական, դեսպան Ղազախստանում: 2005թ. սեպտեմբերից դարձել է APCO Worldwide լոբբիստական կազմակերպության գործադիր փոխնախագահ, որը, օրինակ, հասել է ամերիկյան քաղաքական գործիչների կողմից ԻՕՔՕՑ ընկերության աջակցմանը՝ ռուսական պետական կառույցների հետ նրա կոնֆլիկտում եւ ներկայացրել ռուսական SPI Spirits ընկերության շահերը ռուսական պետության հետ «Столичная» օղու իրավունքի համար դատական վեճում:

Էլիզաբեթ Ջոնսը նեոպահպանողական Ռիչարդ Փերլի ու դեմոկրատ Ռիչարդ Յուրբուքի հետ ընդգրկված է ոչ պետական խմբում: Խումբը հենվում է փոխնախագահ Դիք Չեյնիի վրա: Ջոնսն ինքը 2004թ. զբաղվել է նախագահ Նուրսուլթան Նազարբաեւի սատարման իմիջային ծրագրերով: Այդ խումբը Վաշինգտոնին ներկայացրեց Ղազախստանի՝ որպես չափավոր, աշխարհիկ եւ արեւմտամետ պետության, մասին իր պատկերացումները: Ամերիկյան ռազմավարության մեջ Ղազախստանը պետք է դառնա Կենտրոնական Ասիայի երկրների եւ մյուս մուսուլմանական պետությունների համար մոդել: Այս մոտեցման արդյունքը եղավ Ղազախստանի իշխող վերնախավի փոփոխումից հրաժարումը եւ կառավարման առկա մոդելի ամրապնդմանն ուղղված հրահանգը: Այդ խմբի ջանքերի շնորհիվ, 2006թ. սեպտեմբերին Ղազախստանի նախագահ Նազարբաեւի ԱՄՆ կատարած այցի ընթացքում անցկացված բանակցություններում ժողովրդավարության, մարդու իրավունքների հարցեր չբարձրացվեցին: Խումբը նմանապես եռանդագին պաշտպանեց Ղազախստանին 2010թ. ԵԱՀԿ-ում նախագահող երկիր ընտրելը:

ԱՄՆ-ը Ռուսաստանից տարբերող եւս մեկ առանձնահատկություն՝ կուսակցությունների մեծ դերը ՈԿԿ-ների գործունեության մեջ: Քանի որ այդ ու նաեւ նորանկախ պետություններում փորձագիտական կենտրոնների եւ լոբբիստական կազմակերպությունների գործունեությունը վերահսկվում է ԱՄՆ պետական մարմինների կողմից, ապա այստեղ ուժերի դասավորությունն անմիջականորեն կախված է նրանից, թե որ կուսակցությունն է գտնվում իշխանության ղեկին:

Վերջապես, նորանկախ պետություններում շահերի առաջնդման առումով՝ ԱՄՆ-ի համար քաղաքականությունը տնտեսությունից ավելի կարեւոր է: Եթե Ռուսաստանում ավանդաբար համարվում է, որ հարեւան երկրներում բիզնեսի ներկայությունը կարող է քաղաքական ազդեցության գրավական հանդիսանալ, ապա ԱՄՆ-ում՝ ոչ: ԱՄՆ-ը ապավինում է

քաղաքական (աշխատանք ՈԿԿ-ների, քաղաքական հատվածի, կուսակցությունների, ընդդիմության, ՁԼՄ-ի հետ) եւ վարչարարական (Պետդեպի, պաշտպանության նախարարության, հատուկ ծառայությունների զգալի դերը) միջոցներին:

Օրինակ՝ վերջին տարիներին Վրաստանում հիմնականում ներդրումներ կատարել են ռուսական, դազախական եւ թուրքական ընկերությունները, բայց ոչ ամերիկյան: Սակայն, ինչպես տեսնում ենք, այն վրացական քաղաքական համակարգում չի ստեղծել ռուսամետ քաղաքական լոբբի: Եվ նման օրինաչափություն դիտվում է բոլոր նորանկախ պետություններում:

**eurasianhome.org**

*«Եվրասիայի ժառանգություն» հիմնադրամ*

## ԼՈՐԲԻՉՄԻ ՄԱՍԻՆ

*ԱՄՆ Արդարադատության նախարարությունը հրապարակել է հաշվետվություն լոբբիստական ընկերությունների գործունեության մասին, որոնք ներկայացնում են օտարերկրյա պետությունների, կազմակերպությունների եւ մասնավոր անձանց շահերն ԱՄՆ-ում: 2007թ. երկրորդ կեսին լոբբիստների ծառայություններից օգտվել են Ռուսաստանի, Ուկրաինայի, Ադրբեջանի, Վրաստանի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Բալթիայի երկրների ու Լեռնային Ղարաբաղի կառույցները:*

### **Ռուսաստան**

2007թ. վերջին վեց ամսում ՌԴ կառավարությունը Ketchum ընկերությանը Ռուսաստանի դերի քարոզչության համար (որպես Մեծ ութնյակի նախագահող) փոխանցել է 1 մլն 965 հազ. ԱՄՆ դոլար: Այդ պայմանագրի շրջանակներում, Ketchum-ը Սանկտ Պետերբուրգում անցկացվող գագաթաժողովի ընթացքում կազմակերպել է մամուլի միջազգային կենտրոն, անցկացրել լրագրողների ու պետական գործիչների հանդիպումներ, պատրաստել տեղեկատվական նյութեր եւ այլն:

Դաշնային ունեցվածքի ռուսական հիմնադրամը լոբբիզմի համար Law Offices of Stewart and Stewart ընկերությանը փոխանցել է չնշված գումար:

Սանկտ Պետերբուրգի վարչակազմը ԱՄՆ–ԱՊՅ տնտեսական համագործակցության եւ առեւտրի խորհրդին Սանկտ Պետերբուրգի ներկայացման կազմակերպման, գործարար եւ մշակութային կապերի զարգացման օգնության, պետերբուրգյան շուկա մուտք գործելու մտայնություն ունեցող ամերիկյան ընկերություններին օժանդակության եւ այլ բաների համար փոխանցել է չնշված գումար:

«Չայրենիք» կուսակցությունը հասարակայնության հետ կապերի գծով աշխատանքների համար Global Strategic Communications Group ընկերությանը փոխանցել է չնշված գումար:

«Գազպրոմ» ԲԲԸ-ը հասարակայնության հետ կապերի համար Gavin Anderson and Company ընկերությանը փոխանցել է չնշված գումար: Նշված ժամանակահատվածում այդ ուղղությամբ ոչ մի աշխատանք չի իրականացվել:

«Գազպրոմ»-ի Gazprom Export ստորաբաժանումը հասարակայնության հետ կապերի, «Գազպրոմ»-ի ներկայացուցիչների հետ հարցազրույցների կազմակերպման, մամուլի մոնիթորինգի, մամուլի հաղորդագրությունների եւ այլ աշխատանքների համար Ketchum ընկերությանը վճարել է 1 մլն 223 հազ. ԱՄՆ դոլար:

### **Ուկրաինա**

«Յուլյա Տիմոշենկոյի դաշինք»-ը, կազմակերպության ներկայացուցչի դերը ԱՄՆ-ում կատարելու համար, TD International ընկերությանը վճարել է 546,6 հազ. ԱՄՆ դոլար, հասարակայնության հետ կապերի կամպանիայի անցկացման համար Dezenhall Resources ընկերությանը՝ շուրջ 125 հազ. ԱՄՆ դոլար, իսկ ամերիկյան պետության ու բիզնեսի ներկայացուցիչների հետ կապերի հաստատման համար Glover Park Group ընկերությանը՝ 32 հազ. ԱՄՆ դոլար:

Ուկրաինայի Ազգային անվտանգության եւ պաշտպանության խորհրդի քարտուղար, «Տարածաշրջանների կուսակցության» ծանաչված անդամ Ռախսա Բոգատիրյովան ԱՄՆ իր այցը կազմակերպելու համար Pennsylvania Avenue Strategies Group ընկերությանը փոխանցել է 100 հազ. ԱՄՆ դոլար:

### **Ադրբեջան**

Chlopak, Leonard, Schechter and Associates ընկերությունն Ադրբեջանի ԱԳՆ-ից հասարակայնության հետ կապերի գծով աշխատանքների համար ստացել է 41,6 հազ. ԱՄՆ դոլար:

JWI ընկերությունն Ադրբեջանի Միջազգային բանկից զանգվածային լրատվամիջոցների հետ կապերի գծով աշխատանքների համար ստացել է 167,8 հազ. ԱՄՆ դոլար: Այդ նույն ընկերությունը նմանատիպ աշխատանքների համար Ադրբեջանի նախագահից ստացել է չնշված գումար:

Livingston Group ընկերությունն Ադրբեջանի ԱԳՆ-ից ԱՄՆ Կոնգրեսի անդամների հետ քաղաքական խորհրդակցությունների կազմակերպման եւ տարբեր միջոցառումների անցկացման համար ստացել է 325 հազ. ԱՄՆ դոլար:

### **Վրաստան**

Վրաստանի կառավարությունը ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հարցով խորհրդատվական ծառայության համար Orion Strategies ընկերությանը վճարել է 120 հազ. ԱՄՆ դոլար:

«Արդարություն» կուսակցության համանախագահ Մայա Թոփուրիան

պատվիրատուի իրավաբանական պաշտպանության հարցերով իշխանության ներկայացուցիչների, ՋԼՄ-ի եւ հասարակական կազմակերպությունների հետ կապերի համար մատուցված ծառայությունների դիմաց Squire Sanders Public Advocacy ընկերությանը փոխանցել է 150,8 հազ. ԱՄՆ դոլար (2006թ. Թոփուրիան ու նրա մի քանի կուսակիցները պետական հեղաշրջման կազմակերպման մեղադրանքով կանգնել էին դատարանի առաջ: Դատական գործընթացը շարունակվում էր նաեւ 2007թ.):

### **Ղազախստան**

ԱՄՆ-ում Ղազախստանի դեսպանատունը Ղազախստանի շահերի պաշտպանության համար APCO Worldwide լոբբիստական ընկերությանը փոխանցել է չնշված գումար:

### **Ուզբեկստան**

«Արեւային կոալիցիան» (2005թ. ձեւավորված ընդդիմադիր կուսակցությունների եւ շարժումների դաշինք) լոբբիստական գործունեության համար Maynard, Cooper and Gale ընկերությանը փոխանցել է 332,5 հազ. ԱՄՆ դոլար, ինչպես նաեւ չնշված գումար Sunshine Uzbekistan USA կազմակերպությանը՝ հասարակայնության հետ կապերի համար:

### **Լատվիա, Լիտվա, Էստոնիա**

ԱՄՆ-ում այս պետությունների դեսպանատներն իրենց քաղաքացիների համար մուտքի արտոնագրային ռեժիմի հեշտացման դիմաց Dutko Worldwide լոբբիստական ընկերությանը փոխանցել են չնշված գումար: Այս ուղղությամբ Բալթիայի երկրները գործել են Չեխիայի, Ռումինիայի, Սլովակիայի, Յունգարիայի ու Լեհաստանի հետ համագործակցված (ինչպես հայտնի է, 2008թ. հոկտեմբերին ԱՄՆ վարչակազմի կողմից որոշում ընդունվեց Բալթիայի երկրների քաղաքացիների համար չեղյալ հայտարարել մուտքի արտոնագրային ռեժիմը):

Էստոնիայի կառավարությունը հանրապետության տնտեսության մեջ ներդրումների աջակցման համար Enterprise Estonia in San Jose կազմակերպությանը փոխանցել է չնշված գումար:

### **Լեռնային Ղարաբաղ**

Լեռնային Ղարաբաղի կառավարությունը Վաշինգտոնի իշխանական միջանցքներում շփումների, հասարակայնության եւ ՋԼՄ-ի հետ կապերի հաստատման, խաղաղ գործընթացի խնդիրների վերաբերյալ

տեղեկատվական նյութերի տարածման համար Nagorno Karabakh Republic in the USA կազմակերպությանը փոխանցել է 81,9 հազ. ԱՄՆ դոլար:

Ընդհանուր առմամբ, 2007թ. երկրորդ կիսամյակի ընթացքում ամերիկյան լոբբիստներին վարձել են միջազգային վեց կազմակերպության (օրինակ՝ Եվրոպական հանձնաժողովը), ինչպես նաև 146 պետության, առանձին վարչական միավորների (օրինակ՝ Սանկտ Պետերբուրգը եւ Շոտլանդիան), չճանաչված պետությունների եւ անկլավների (ինչպես Լեռնային Ղարաբաղն ու Տիբեթը), հասարակական եւ մասնավոր կառույցների ներկայացուցիչներ: Նրանց մեջ են նաև պետություններ, որոնք դիվանագիտական հարաբերություններ չունեն ԱՄՆ-ի հետ (Իրանը եւ Չյուս. Կորեան):

**Washington ProFile**

06.11.2008



# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գագիկ Տեր-Հարությունյան ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ .....	1
Սարգիս Հարությունյան ԼՂՀ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԻ ՇՈՒՐՁ. «ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ» .....	5
Ռուբեն Մելքոնյան ԹՈՒՐՔԱԿԱՆ «ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ» ՆԱԽԱՀԻՍՔԵՐԸ .....	10
Սեւակ Սարուխանյան ԻՐԱՆ–ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐԻ ՇՈՒՐՁ.....	18
Սուրեն Մանուկյան ՆՈՐԱԴԱՐՁ ՄԱՅՄԵԴԱԿԱՆՆԵՐ .....	22
Արաքս Փաշայան ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՐԴԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ .....	28
Յուրի Պանասիկ ԱՄՆ ՇԱՀԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ .....	32
ԼՈՐԲԻՉՄԻ ՄԱՍԻՆ .....	37

Շապիկին պատկերված է  
**«Վշտադուռ»** (խոշապ գավառ, Վասպուրական)

Դռան վրա՝ Իշպուհինի եւ Մենուա թագավորների  
ժամանակաշրջանի սեպագիր արձանագրություն

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Մելիք-Ադամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ ՕԼՄ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: